# ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

## ԽՐԱՏՔ ՊԻՏԱՆԻՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ

Ի ԱՆԳՂԻԱՑԻՈՑ ԼԵԶՈՒԷ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1845 = ՌՄՂԴ

# ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

2940-б 1531-Աէ

# ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ
# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ
## ԽՐԱՏՔ ՊԻՏԱՆԻՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ

Ի ՍԻՆԷԱՑՒՈՑ ԼԵԶՈՒԷ
ՅԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ

ՓՈԽԵԱԼ Ի ՄԵՐՍ

ԳԷՈՐԳ ԱՒԵՏ ՋԱՔԱՐԵԱՆ
ՋՈՒՂԱՅԵՑԻ Ի ՊԱԹԱՒԻԱ

9952-57 8418

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1843 = ՌՄՂԲ

241

2004

ՀՍԽՀ-ССРА

## ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Պարտաւորապատշաճ՞ն մեր չափա-
ւորութիւն, որ ընդ արդիւնս ի-
րաց ընտրեալ է ցանգ խնդալ,
և 'ի բարեխնամոյն գովեստից յոր-
դորագոյնս ևեթ 'ի գովելիսն լի-
նել, տեղի ետ յայս նուագ հե-
ռաւոր այլ սրտառուչ թախան-
ձանաց ազգասէր և ուսումնա-
սէր Թարգմանչի մատենիկանս,
և զառաջինկայս նորին առ մեզ
թուղթ հարկ արար 'ի տիպ մա-
տուցանել ։ Աստուածասիրութե
նորին ակն յայտնի տարացոյց
նախ այն իսկ՝ զի կիրթ ախոր-

ժակօքն այսպէս գիտէ ընտիր առնել պիտանեացն յանթիւ գրենոյ եւրոպականն ազանց. եւ դարձեալ զի եւ 'ի թարգմանութ՞ի այսպիսեաց անվեհեր ձեռն արկանէ։ Իսկ ճշմարիտ ազգասիրութեանն նախանձելի օրինակ՝ զի եւ զծախս տպագրութեանն մատակարարեալ, տենչացաւ ձրի բաշխել 'ի տպագրելոց առաւել օրինակս հազար յուսումնարանս եւ 'ի վարժոցս ազգիս։

Արդարեւ, որպէս ինքն իսկ յառաջաբան երկասիրողն կանխածէ, վաթսնամեայ ժամանակաւ յառաջ թարգմանեալ է գործս յաւելուածով հանդերձ 'ի բարեյիշատակ եւ յազգասէր իշխանէ Սարգսայ Շահրիմանեան եւ տպագրեալ եւս 'ի Վենետ. սակայն զի մի անտարգասաւոր

մնացէ գովանի վաստակ և բազմաբաղձն ազգասիրութեան նորոյ Թարգմանչիս, ոչ անդէպ ինչ Թուեցաւ մեզ ընդ նորոյն իմն կերպարանաւ վերստին 'ի լոյս զսա ընծայել։

Նա արդ մեր այսպէս խնդամիտ յօժարութեամբ կամակատար եղեալ նմին, ձայն տամք մերոյ մանկտւոյն, զի ոչ միայն որ 'ի սմա խրատուցն բարեաց լիցին կատարիչք, այլ և զԳԷՈՐԳԱՅ ԱՒԵՏ ՁԱՔԱՐԵԱՆ զանուն և զարդիւնս ընդ անուան ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ իշխանին անմոռաց յուշի կալեալ, նոցին բարեաց ջանիցն ևս եղիցին նախանձաւորք։

ՏՊԱԳՐՈՂՔ

ՍՐԲԱՆՈՒԷՐ ՀԱՅՐ ՀՈԳԵՒՈՐԱՑ

ԿՐՕՆԱՒՈՐԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԿ։

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ՏԵԱՌՔ ԻՄ,

ՍԻՐԵԼՔ. *թէեւ առանձնացեալս աստանօր ե-ղէն յորդորել զիս 'ի նորատաս ծառայութեան պատուականն աշխարհիս մերոյ բառ խնամակա-րի. նախ բնաւորականն փափագ եւ անձն սրտիս առ նորին սպասաւորութիւն. եւ ապա Ճաշակ քաղցրութեանն յոր բազում անգամ վայելեցի ընթերցմամբ շահաւէտ մատենից տպագրելոց առ 'ի ձէնջ, եւ հրատարա-կելոց 'ի գրասեր եւ 'ի բարգաւաճման նո-րին. յոր սակս նորոգէր ինձ արշաւել, բա-րեպատեհ գանձս դայս ժամանակի՝ գոհու-*

թիւն մատուցանել ձեզ, որպէս և վայել իսկ է ինձ հայասէրիս, վասն անդուլ և բազ-մարախոս ջատագովութեանց և հարազատ ազգասիրութեան և քրտնաջան վաստակոց ձերոց՝ զոր ցուցանէքն միշտ ազգիս Հայ-ոց: Իսկ երրորդ անգամ յորդոր եղև ինձ և պիտանութիւն հանճարեղ բարոյական գրոցս, որ մակագրի Տնտեսութի մարդկային կենաց, զոր արարեալ է Անգլէացւոց ու-րումն, և յանգղիականէ լեզուէ բարբառ յայլ-մէ ումեմնէ. զոր և գտեալ իմ ընդ այլ մատեանս և ախորժեալ ընդ բանին՝ ցան-կացայ փոխել 'ի Հայրենի մեր բարբառ:

Ընդլորդ է ինձ նորոգս հրաւել առ ձեզ զգրոցս, որ թէպէտ և փոքր է քանակաւ, այլ մեծ պատուականութեամբ. վասն որոյ և ամենայն չափու հասակի և ամենայն կարգի մարդկան արժանաւոր առընթեր ունել, ընթեռնուլ և յօգուտ վայելել: Բանիք և իւրքին առաջնորդն մանկանց գիտաց և 'ի գալոյ անդ հեթանոսական մոլորութեանցն ընտրել պայազախինթ բա-

նից վերջանկութենէ մարդոյ , և այդու և փայլուն բանիւք գեղեցկայարմար յօրինել- որպէս զի 'ի գործել և յիմաստուն բանիցն յաղթահարեալ չարաչար կրից՝ 'ի բան յորդորեալքն դառնայ , և միշտ վայելչին ըղ- ձեռ կրթել , որպէս և ամենեցուն պարտք են , և առաւել որոց 'ի բնաւորեալ զարդս կեանք՝ զործէն ճշմարտութեան ընկալեալքս

Եւ արդ արժանի՛ զՁեզ , բազմախառնակ և ազգասէր Հայր , ընդունել Հանճարի որոյ փնտւէր զայս դուգնաքեայ , զոր Հա- մարձակիմ մատուցանել սրբութեան ձե- րում՝ 'ի ձեռն մանկանց խնդ արդեօք պարոն Մանուկի Յորդանանեան , որոյ եղեալ է 'ի մէջ յուղեորութեան խորամընդ . Նչ- րում՝ Հանդիպել տեսութեան պատուականն Հայրդ և ընծայել ձեզ զերդն յարդութեն . բանզի Հաստատեա գիտեմ՝՝ զի ոչ այլ ու- մէք բան թէ ձեզ պարտ և փոյթ լինի 'ի բոյս աճել զերկաւորութիւնս մեր . որպէս և ոչ որ է խորու գձեզ որ փափագելի տե- սանել յազգիս մերում մանկունս կրթեա-

յոս 'ի ձեռն բազմամասնաւորիկ և աշխատանացու խրատատուին որք բովանդակեալքն 'ի սմա . քանզի հանրապարակէ անտանելի 'ի ձեռ անդրա- բայ Ջանա առ 'ի հրահանգել զմիտսգրեա տաձմ, զի առաւելագոյն լինիցի և 'ի բաց դարձցի յա- պականողական մոլութեանց, և հեռացող անմեղութեան- չականն փորուց և գգոն գնայից , երկիւ- ղեան հանդերձ Աստուծոյ մեծին և անմահա- կերին և պատուիրանին , որ սկիզբն է և ար- մատ անմահական բարեաց և իմաստութեան :

Ընդ որոյն 'ի 1835 ամի թարգմանեալ էր իմ' զմասնեանս . այլ երկու ինչ խափան լինէր տպագրութեանն . նախ այն' զի մին- չև ցարդ ոչ գոյր գտի յոյր ձեռն տպագրել- ցից զմատեանս , որպէս այժմ զհաստատա- րիմ բարեկամն իմ' զոր յիշեցի . և միւս ևս' զի բուռ յանձնեալ ամօք , թէ այդպիսի ինչ գրեցիք յառաջնոյ ամեմայ քան զմեզ թարգ- մանեալ եղեւ և 'ի տիպ արձանացեալ . զոր և իմ' բազում անգամ խնդրեալ արարեալ և քննեալ , ոչ գտի ոչ գրիցն և ոչ զօրա- գրութ : Այլ թէպէտ և կայցէ իսկ այն-

պիսի թարգմանութիւն , այսպէս ոչ ա-
պաւէն ինչ որ համարեցայ և զիմ՝ դոյզն
երկասիրութիւնս առ սէր պատուական ազ-
գիս . զոր և առ օտարս տածանեմք , բազ-
մաց զմիոյ իրէ բուռն հարեալ գրել . և 'ի
յօրինից թարգմանեալ գնոյն . այլ խրախուսան-
չիւր որ անշուշտ զիւրոց մտաւոր ճգանցն
և զվաստակոց ընդունի զփոխարէնս :

Ի վախճան բանիս պարտ անձին վար-
կանիմ խոստովանել՝ զի դժուարահաս եղև
ինձ ձեռնարկ գործոյս . քանզի առ խնա-
յուած և 'ի քաջայայտութիւն այսպիսեաց
հանճարեղ խօսից՝ ճոխագունի եւ հմտու-
թեան պէտք էին երկուց լեզուացս , հայ-
կականին և անգղիացւոյն : Սակս որոյ ե-
թէ վրիպանք ինչ 'ի մէնջ այլրեցան , ակն
ունիմք ներողամիտ գթով անպարտաւ ըն-
նել յանձնառութ ընթերցանելեացն , մա-
նաւանդ 'ի ձէնջ 'ի Ճարցդ Հայեցողաց ,
որոց յանդիման կացուցի զանպատրաստու-
թիւնս իմ . միայն հայիլ աղաչեմ՝ յուշ լինից
նպաստակիս և յետանդն ջանիցս . իսկ զաղ-

ղութիւն թերութեանցն թողուլ զգաստու-
թեան խնամոց ձերոց, մնամ բազում մե-
ծարանօք

ՁԵՐՈՒՄԴ ՍՐԲՈՒԹԵԱՆ

Ի ՊԱԹԱՒԻԱ
30 ՄԱՐՏԻ, 1841։

ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ
Գէորգ Աւետ Զաքարեան։

## ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅ

## ԱՆԳՂԻԱՑԻՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

## ԱՌ ԿՈՄՍՆ **:

Ի ՓԵՏԵՐԲՈՒՐԿ, յ12 ՄԱՅԻՍԻ, 1749:

Ի վերջնում թղթիս՝ զոր շնորհս գտի առնել առ տէրութիւնդ 'ի 23 դեկտեմբերի 1748 ամին, զկատարեալ բառ խնդ ձեռին բաւականի զնկարագիր աշխարհիս և զոր- նապատում խաղաղութեանց անդէկութիւ, կամէր ինձ այնուհետև 'ի թղթի առա և որ գՀեա սորին՝ կարգել քեզ և ծանօթու- թիւնս զօրինաց, զքաղաքականն կարգաց, զկրօնից և զբարուց ազգիս Անգլեացւոց. այլ այժմ դէպք ինչ անակնկալք 'ի մեր ե- րկեալ յաւուրս յայսոսիկ, և զխռովութեանց արանց զուշ և զխեղանաւթիւն յայն գրա- ւեալ, քանզի և բազում բնութեանց և զը-

բուցայց սպասաւոր լինելոյ է իրք առ ու-
սումնասէրս, ոչ ինչ ընդհատ սիրելի ա-
խորժակաց և բուռն ուրախութեանդ գիտա-
ցեալ խմ՛ պայն, փոյթ յանձին կալեալ զար-
ձանագանել զբանս խմ՚ի վերայ այնորիկ ։

Ըստ երկի աշխարհին Միւնէապօլսոյ յարևմը-
տից կողմանէ կայ Թեփոյէթ երկիր մեծա-
տարած, զոր անուանեն Պարանթոյ կոչեն.
և 'ի նմին է Լաշաս գաւառ, յորում բնա-
կէ Լամայն կամ՛ քրմապետն դիւապաշտից
կողմանցս, որում աստուածական իմն սպա-
սիւ և շուք ընծայեն. և բազում մարդիկ
'ի շրջակայց առ դայն լուեալ զիմն համբա
ստացինութեան վարուց նորա՝ յորդորեալ
գնան 'ի Լաշաս աստուածեան պարգևօք,
սաղ նուէրս և ընդունել օրհնութիւն 'ի
նմանէ ։ Տեղի բնակութեան նորա է հոյա-
կապ տաճար մեհենական կառուցեալ 'ի
գլուխ լերին Պոյթաղայ. առ ստորոտով
լերինն և 'ի հանդէպ դաստին Լաշայ
բնակեն պաշտօնեայք Լամային պանծա-
նեալք կարգաւ և աշխոյժանօք . բազմաց

'ի նոյանէ նուիրեալ են մեհեանք , և պա_
տիւ մատուցանի նոցա իբրև աստուածա_
բնաց անձանց ։ Նմանօր քաղաքավարութիւն է բըդ_
մաց , որպէս երկրանոյն յԻտալիա , և ըղ_
պարէն կենաց նոցա մատակարարեն ան_
պակաս տուրք ժողովրդեան , որք և 'ի
հնաւոր աշխարհաց առաջեն նոցա պա_
տարագս . որպէս յաշխարհէն Թամթա_
բայ և 'ի Սորոյոց մեծաց , և գրեա թէ
'ի համօրէն հնդկաստան գաւառաց ։

Յանգոյն մեծ յորժամ՝ ընդունելի պաշ_
տօն յերոյն , ամբառնայ 'ի սեղան շքեղա_
շուք զարդու զարդարեալ , և զատս 'ի ներ_
քոյ առեալ բազմի 'ի գեղապաճոյճ բաս_
տեռան , և երկրպագութ նորա խոնարհա_
կան ամենածութեամբ անձկանօք առաջի նո_
րա . իսկ նա և ոչ երբեք անգամ մատու_
ցանէ նուաստութեան նոցին , և ոչ խօսե_
լոյ արժանի համարի ընդ նոսա , թէպէտ
և տոհմիկ և թագաւորազունն որ իցէ սպա_
սաւորն . բայց միայն ձեռս 'ի վերայ գլխոյ
նոցա եդեալ՝ յայս ինն այնպէս առնէ .

**

եթէ թողլով եղեն նոցա մեղքն խրատուց ։
Եւ ոչ այսոր եւեթ հաւատան մարդկային ,
այլ և զծածուկս սրտից խրատուց համարին
անսանել նմա . առ որ և ձեռատուն աշա-
կերտք նորա թուով իբր երկերիւր ընտիրք
և սրբատառականք քան զամենայն Լամբե-
ցիս , զոր գործեն անանհաւական կարծիս
տալ պնդանել առ ժողովուրդն , որպէս թէ
լսա կամի փոխիլէ զընակարան մարմնոյն ,
և յայլ փոխիլի մարմին , ոչ ընդ 'ի կե-
նաց անկանելով ։

Վարինուց կարծիք էին առ խնամաւոն
Սինէացւոց , եթէ 'ի մեհենի անդ մեծի
ամբարեալ պահեալ կայցեն մատեանք հին
'ի դարուց բազմաց . և այժմու ինքնակալ
աշխարհին հեռաքննին հնատանդ մատենա-
գրութեանց՝ 'ի մերայ համեալ Չինաստա-
նեան կրայն , Քանահեար եղե զրամի
ածել զայնս . վասն այնորիկ խոյզ և խնդիր
արարեալ առն հնագիտի և ընդաւանի
որ կարիցէ զնախնեաց միծանել տառս ,
ընտրեալ առ գործն կարեւոր զմի ոմն 'ի

Զանգխայուոյն կոչեցելոյ, որք են գերագոյն վարդապետք ուսմանց, և անուն նորա Բասաւծու, այր իբրու յիսնամեայ տիօք, պատկառելի գնացիւք և ամենայն կերպարանօք, Ճարտար 'ի գիր և 'ի բան. որոյ հասեալ էր ծանօթանալ ընդ իմաստնոյ ումեմն Եւրոպացւոյ բնակելոյ 'ի Փեկինի, և ուսեալ 'ի նմանէ զելս Եւրոպացւոյն Թիփ-պեթայ։ Ի միջոյ բնաւոր և ջանասէր Ձր-րից հանճարոյն յաւելուլ խնի նոր ճշգրիտ կամեցեալ ենթադրականին՝ անուանեալ զնա Բուդդայ, որ է գերաստուծեան պաշտօնեայ. և հանդերձեալ զգետս ուղղութեանն արքայականաց ճշմարտութեամբ, եւ 'ի ձեռս նորա և բազում թանկագին սպաս 'ի նուէր քրմապետին մեծի և առաքանւոյ նորա, գրեալ և թուղթ իւրով ձեռամբ, որոյ այս է պատճէն.

ԱՌ ՄԵԾ ԵՐԵՍՓՈԽԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Նուաստիս և գերերջանիկ ոտիցն երկրպա-
գութեամբ հանդերձ խնդրով·

« Մեք որդիք Սինէացւոց և ինքնա-
» կալ ամենայն ինքնակալաց երկրի, Հրա-
» մայեցաք փառաւորելումն առ 'ի մեծ
» Քահանայ գերապատիւն պաշտօնէի՝
» մատուցանել զխոնարհական պաշտօնս
» մեր և զանձինս առ ոտս քում որդու-
» թեան . և խնդրել փառն մեր և մերոց մի-
» աբանից և ամենայն ինքնակալութեան
» զհովանաւորութիւն ամենայնի և ամե-
» նախնամ Հայրական օրհնութեան քոյ ։
» Յանձնեցաք զոգւով և անձնաւորք
» յուղել խնդրել զգնալոյ ընկերս նախնեացն
» յիշատակարանս, և ամբարել 'ի նորանց

» զխնամս հանճարոյ առաքինոյ դարուց,
» խնդրեալ զխոսոյսր 'ի Թանգարանս անդ
» Նուիրական Նկարչին ոչ սակաւս յաղթ-
» ախտաց վարպետական վսեմ և պատուա-
» կան մատենից լինել, որ առ բաղձա-
» ժամանակեաց հռութեան 'ի մտա-
» ցնս անկեալ ժողովրդոց, և խնամոց
» անգամ արանց անծանօթ եղեալ այնու-
» հետև: Իսկ արդ մերովկան Ջան 'ի կեր
» ածեալ զի մի բնաջնջ և անյիշատակ լի-
» ցին պատուական մատենաքդ, պատ-
» շաճ համարեցայ առաջել առ որդու-
» թիւն քո զայս զայս յոգնահանճար և
» մեծարգոյս, զգեղադրին պաշտօնատար
» դրանս մերոյ զԱստուծոյ, որպէս զի եթէ
» հաճոյթուեսցի և բարեպաշտութեան, հրա-
» մամն տացես քննել զգիրս նախնեացն, և
» հաստ բանիցն լինել. վասահ զոյով մեր
» 'ի բաղձանհմաս մակացուի առնդ վա-
» րկածի խոսից, զի բանական է և 'ի Թարգ-
» մանութիւն որոց մանդամ և հանդի-
» պեալ, Թէպէտ և կարի հնագոյն խոչ-

» մատեանն դէպ վերի գտանել » ։

Ըստանօր չէն ինձ կամք աշխատ առ-
նել գրել յիշատակարան երկարապատմութեամբ ու-
ղեւորութեանն , զոր և 'ի սոյն արձանագրաց
նոյն այր բազմերախտաւորին նորաբեր ծանօ-
թութեամբք , և ինձ թոյլ եւ զնոյն առնել
թարգմանութիւն 'ի դարձին խնամ՝ յՆոր-
գեա ։ Որդ իբրև եհաս նա 'ի նուիրական
ասպահանն , փութացի անդրանդին և ձեռն
պարգևոցն յանճրկեալ ընդունելութիւն
յօժարական գտանել 'ի Լ ամայէն , որ
և ճոխեաց նմա փառս առանձինն և
սպասաւորս յիւրոց մանկանց , և խնա-
մոյն զոր գործով օգնել նմա 'ի գիւտ իւր-
դրբերացն . և զամենայն սեղ մնեալ խուզեալ
նորա գրքեան մեհենացն՝ մխիթարե-
ցաւ ոչ սակաւ զի եգիտ մատեանս ընտիրս
և վաղեմիս ։ Ըստ որ նա բարբառեն 'ի մատե-
նից անտի զորս յանձն առի , և համառօ-
կան ծանօթութիւն զորոնակազդացն քրի-
նեալ և սառադեալ զմատենականն յորս եկաց
իբրաբանչիւր որ 'ի նոցանէ . և այսորիկ

ցուցանեն զնա ոչ միայն ընթերցասէր լինել այր, այլ և ճարտարամիտ և շատահանճար ։

Մնացորդն 'ի մատենիցն զոր եգիտ, մինչ ցայն վայր անխախտայն և անթարգմանելի կացեալ առ Լատինացիս, է մատեան փոքրիկ գրեալ 'ի տառ և 'ի բարբառ նախնի իմաստասիրաց աշխարհին որ Պարսմանն կոչեին, և ունի կանոնս բարոյականս. այլ եթէ ո զայն գրեաց, և կամ յորում ժամանակի՝ ոչ է յայտ ։ Զայս մատեան համօրէն փոխեաց նա 'ի սինէական բարբառ. այլ որպէս և ինքնին խոստովանի, անհաւատար յոյժ և յետնեալ 'ի փոխանական և 'ի հզօր ձեռոյ բանից բնագրին ։ Տարաձայն են կարծիք բանասատից և քննող զանձանց. են որք զարմացեալք մեծապէս ընդ իմաստութի բանիցն, Կոնֆուչէի աշխարհահռչակ իմաստասիրի զայն ընծայեն, և յետ ժամանակաց ասեն թարգմանեալ 'ի լեզու Պարսկմանաց, և բնագրին անհետ եղեալ. և են որք Լաջանի այլոց մեծանուն իմաստասիրի զսա

սանն լինել օրէնս և կանոնս , այն որ ժա_
մանակակից եկաց Լանֆրանկի և ուսանորդ
եղև աղանդոյն Ռոսսեայ . բայց և սորա ոչ
էին ընդ Հատ յառաջնոյն տարածեալ կրեն
վասն ընդունայն սատարութեանն : Ռաշտում ևս
այնք են , որ զՀետ երթեալ գեղեցիկ խնա_
մոց զբոյն և այլոց նշանաւոր Հաւանորին զայն
յորինեալ ՚ի Տանտսամբեայ պարաՀմանէ , որոյ
և Թուղթն գրեալ առ Եղիաքանդր ալխար_
Հակալ Յոհանայ՝ պատմի ՚ի մէջս արև_
մտեայց : Այսքան կարծեաց մնարան երևի
և ինքն Բրասածու , և թէ ոչ Տանտսամբեայ՝
սակայն այլոց ուրուք պարաՀմանի գործ վար_
կանի . զի տիպք բանիցն , սաէ , զիմաստա_
սիրացն այնուցիկ ունին զոճ , և ոչ Թարգ_
մանութեան երևին Հնոյ : Կարգի զայս որ_
պէս որ և անդրմէ . բայց երկրայութիւն
է առ խնասստան՝ որպէս կանխեցի ասել՝
զգրոցս , քանզի անձանն է ոճով արևելեան
ընթերցուածոց . որպէս զի եթէ չէին ՚ի
նմա և սեպՀական դարձուածք ինչ արևա_
կանք , և Հնութիւն ընդունին յորում գրեա_

րն է , բազմաց անմիկրաց Թուէր եւրոպա֊
ցի ազգ գիտնականացն :

Այլ ո՛ որ և իցէ օրինակագիր գրոցս ,
հակառակութիւնն մեծ զոր կրէ նա առ
բանագէտս , և մեծափափագ եռանդն ըն֊
Թերցանելեաց նորին 'ի քաղաքի աստ , և
միաբերան գովութիւն նորին , յորդ որ եղեն
և ինձ ձեռն արկանել և փոխել զայն յանգ֊
ղիացի բան . մանաւանդ յորժամ զմտաւ
ածէի ոչ անախորժ ինչ նուէր լինել զայս
քում՛ ամէրանձդ , Թէպէտ և ոչ սակաւ օտա֊
րացեալ լինի Թարգմանութիւնս այս 'ի բր֊
նագրէն . այն զի և ես 'ի սինէականէն փո֊
խեմ զայս . այլ դէպք ինձ 'ի բաշխի յաջո֊
ղեն , զի ոչ որ կարէ ընդ բնագրին զուգա֊
կշիռ առնել զԹարգմանութիւն զայս : Մի֊
անգամայն այն ունիմ արդ աղաչանաց առա֊
ջի գիտակացն փառս շարադրողաց Թարգ֊
մանութեանս . քանզի Թէպէտ և 'ի սկզբ֊
բան իբրև ձեռն 'ի գործ արկի' կամէր
ինձ ազատաւորաբար բառ վայելչութեան խօսից
ըստ խո մերոյ յերկրել զԹարգմանութիւնս,

այլ փոփոխական իմաստք և ասացուածք նա-
խերգանաց , հզօր զօրութիւն բանիցն և
հանկերծ դարձուածք զրուցացն՝ հարկ ան-
հրաժեշտ ՚ի վերայ իմ՛ածին՝ լուռ կալոյ հե-
տեւող լինել օրինակին . առ այս և օրինակ ինձ
ունէի զթարգմանութիւնս գրոցն Յոբայ
և Սաղմոսաց, և զՍողոմոնի գրոցն և զմար-
գարէից ։

Բայց ես երանելի զանձն իմ՛ վարկայց
եթէ յաջողեսցայ զուարճալի առնել զգործս
և հայթհայթել զբօսանս տէրութեան քում ։

# ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԿԵԱՆՑ ՄԱՐԴՈՅ

### ՆԱԽԵՐԳԱՆ

ԽՈՆԱՐՀԵՑՈՒՑԷՔ զգլուխս ձեր, բնակիչք երկրի. ամփ ՚ի բերան լերուք, և ընկալարուք զպատգամն ՚ի վերուստ ահիւ և ակնածութեամբ: Ընդ ամենայն անգիս ուր արեգակն ծագիցէ, ուր հողմն շնչիցէ, ուր միանգամ՝ գուցէ ունկն առ ՚ի լսել և միտք առ իմանալ, օրէնք կենաց և բանք ճշմարտութեան եղիցին ընդունելի փառօք և մեծարանօք:

Ամենայնի Տէր է աղբիւր. նորա է կարողութիւն և անբաւութիւն. իմաստութիւն մշտնջենաւորականց է նմա, և գթութիւն նորա կայ մնայ յաւիտեան և եւ:

Գահոյս արկեալ բազմի նա ՚ի միջի ափեզերաց, և ոգի բերանոյ նորա կենդանացուցանէ զամենայն արարածս:

Որ մերձենայ մասամբ յաստուածս , և ցնծութիւն ընթանայ 'ի շրջանս խորհրդոց :

Որ շրջի յընդհանուրս 'ի թեւս հողմոց , և անքննարկութեան կամաց նորա անտանին ծագք երկրի :

Ի ձեռին նորա են կարգք և շնորհք և գեղեցկութիւն աննմանին . աննմանն գործք նորա պատմեն 'զխնամատութիւն նորա . և խորհուրդ մարդկան ոչ եղև նո_ ցին խելամուտ :

Իբրև անուրջք անցանեն առհին զմաւք մարդոյ ստուերք զխուստութեան . և իբրև ընդ խաւար անտանէ և դառնի , և ահա խաւարեալ է :

Իսկ խնամատութիւն Տեառն պայծառ է որպէս զլոյս երկնից . Տէր ոչ դառնի մարդ , քանզի ինքն աղբիւր է ճշմարտու_ թեան :

Արդարութիւն և գթութիւն կան ա_ ռաջի աթոռոյ նորա . բարութիւն և սէր փայլեն 'ի դէմս նորա :

Ով է փառաւորեալ իբրև զՏէր , կամ ո կարիցէ 'ի պայքար մտանել ընդ հզօրին . և կամ ո հաւասարիցի խնամատութեան նորա :

Նա ինքն ստեղծ զքեզ , ո՛վ մարդ . հրա_ մանաւ նորին սահմանեցաւ բաղդ քո 'ի վե_ րայ երկրի . աւուրք են բարութեան նորա՝ զու_

րութիւնք մտաց քոց, և գեղեցկայարմար չինուած մարմնոյդ՝ գործ է ճարտարութեան ձեռաց նորա ։

Արդ ունկն դիր ձայնի նորա, զի քաղցր է և բարերար. և եթէ միամտութեամբ պաշտիցես զկամս նորա, հանգիցէ 'ի խաղաղութեան անձն քո ։

# ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

## ՊԱՐՏՔ ՄԱՐԴԿՈՅ ԱՌԱՆՁԻՆՆ

### Ա.

### ԽԵԼԱՄՏՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱԾԳԱՆ լեր յամենայնում, ով մարդ, քննեա և տես՝ վասն էր առեղծա-րեր : Ի միտ առ զկար զօրութեան քո, զաղէտս և զպարտս քո, և ուղղեսցին 'ի բարութիւն ամենայն ճանապարհք քո :

Մի խօսեսցիս մինչչև քաջ կշռեալ զբա-նս քո. և մի գործեսցես մինչչև հետազօ-տեալ զելս գործոց քոց. զի զերծ լինիցիս 'ի նախատանաց, և մի մնասցէ ամօթ ընդ յարկաւ քով, և մի անկցին երեսք քո 'ի թախիծս սգոյ:

Այր անփոյթ և անմիտ ոչ արկանէ սանձ լեզուի իւրում. բարբառնջէ վայրա-պար, և յանմտութեան բանից իւրոց կըշ-տամբեալ յանդիմանի :

Որպէս որ երագընթաց վազս առնու-

յու զպատճառս և անկանիցի 'ի խորխո_ րատ զոր չէր ուսեալ յառաջագոյն, այս_ պէս և որ փաղփաղէ միջամուխ լինել 'ի գործ, և ոչ խորհի զելս նորին:

Այդ ունին մատն ձայնի խորհրդածու_ թեան. քանզի բանք նորա բանք են Ճըշ_ մարտութեան, և Ճանապարհք նորա ա_ ռաջնորդեն յանկերկեան ստուգութիւն:

Բ.

ԶԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մի՛ եւ դու է՛ մարդ, որ ապաւինիս յիմաստութիւն քո. կամ՞ զի պարծիս ընդ գիտութիւն քո:

Սկիզբն գիտութեան՝ Ճանաչել զտգի_ տութիւն անձին. և եթէ կամիս ազնիւ և պատուական երևել յաչս այլոց, թող անդր 'ի բաց զյիմարութիւն՝ իմաստուն երևելոյ անձին քում:

Որպէս զգեստ անպաճոյճ զարդ է վայ_ ելուչ կնոջ գեղեցկի, և չափաւորութիւն կենաց՝ չընտրելագոյն զարդ է իմաստութեան:

Բանք առն համեստի պայծառագոյն կացուցանեն զՃշմարտութիւն. և խոստո_

վանութիւն երկմտութեան՝ բառնայ զթե-րութիւն գիտութեան :

Չէ նա յանձնապաստան 'ի գիտու-թիւն իւր. մտախորհ լինի 'ի վերայ խրա-տուց բարեկամին, և յանձն ձգէ զօգուտս նոցին :

Գովեստ լսելէ, 'ի բաց դարձուցանէ զունկն իւր, և ոչ կամի հաւատս ընծայել. և յետին յետոյն է 'ի ճանաչողս ուղղութեանց իւրոց :

Ամէն խորհրդոց զի յաւելու զշնորհս գե-ղոյ, այսպէս և առաքինութիւնք նորա գեղեցկէք են ցուցանին ընդ ստուերա-պարկեշտութեան :

Տես զյանձնապաստանն և զմնապարծ, և 'ի միտ առ զչար ամբարտաւանութե նորա. պատմուճանս ոսկեթելեալս ար-կանէ զանձամբ, ճեմի 'ի հրապարակս, և զաչսն յայսկոյս և յայն բաժանեալ շրջ-շրջէ և ամենեցուն կամի յակն անկանել :

Կոկոզավիզ 'ի վեր առնէ զգլուխ իւր և չանէ լինի տնանկին. գոռոզութեամբ անդրայ ընդ խոնարհս, և 'ի վեհից ծաղր և ծանակ լինի, և խոյս ընդ ակն ամենեցուն՝ վասն անմտութեան և մեծափառութեան իւրոյ :

Զխորհուրդս այլոց մերժէ արհամար-հանօք. վստահ է 'ի կարծիս մտաց իւրոց,

և ամօթով կորուսցի ։

Ի ցնորս անտանիս խորհրդոց իւրոց փքա-ցեալ պարծի ․ պարապումն և զբօսանք իւր են զօրն ողջոյն զանձնէն ճառ արկեալ խօսել ։

Ըմպէ որպէս ծարաւի յաղբերաց շո-ղոմութեան շնթողաց իւրոց, մինչև 'ի նոցին իսկ 'ի մարդկութեան խարդաւա-նեալ կցի ։

Գ․

## ԳՈՐԾԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Քանզի անդարձականք են աւուրքն անցեալք, և հանդերձեալքն իսկ թէ վրի-պեսցին 'ի քէն ․ արդ հետ արաքեզ, այլ դու, վարեա ժամանակաւս որ կայ․ անտր-տունջ ընդ կորուստ անցելոցն, և մի մե-ծայայս յապագայն ։

Ի քո ձեռս է վայրկեանս այս ․ խոկ վաղիւն կայ յարդանդի հանդերձելոց, և ոչ գիտես որպիսի ինչ ծնանիցի ։

Զոր եղիր 'ի մտի գործել՝ գործեա վաղվաղակի ․ և զոր կարես վճարել յա-ռաւօտու՝ մի յերկարաձգեսցես մինչև 'ի մուտս արեգական ։

Տառապանք և տուայտանք են ծնունդք ծուլութեան . իսկ վաստակք առաքինութեանց հանդերձ անեն զխնդութիւն ։

Ձեռք գործօնք բաղնան զկարօտութիւն . բարօրութիւն և յաջողութիւն կենաց՝ մնան են մինչև առն աշխատասիրի ։

Ո՞վ է դա որ լցեալ է մեծութեամբ , և ամբարձեալ ՚ի բարձր աւագութեան . որ արկանէ զհուրն հանդերձ փառաց և շքոյ , որոյ հաչակ համբաւոյն ընթանայ ընդ քաղաքս , և որ ՚ի խորհրդարանս թագաւորաց առաջիկայ գտանի ։ Նա է որ արգել զծուլութիւն ՚ի մանկութեան ՚ի տան իւր . և ցանկերգութիւն առաց . Ախերիմ թշնամի իմ ես դու ։

Որ կանխայարոյց լինի ընդ առաւօտս , և ննջէ յանագանի . որ կրթէ զմիտս իւր խորհրդածութեամբ , և զմարմին իւր երկրագործ վաստակօք . և զերկրածին յաջող-պահէ ։

Բեռն է անձին այր հեղգ . ժամք նորա ծանրագանգաղք են յանցանել . և աստանդական գեղերի թէ որպէս ժամավաճառ լինի ։

Իբրև զհովանի ամպոյ անցեալ անցանեն աւուրք նորա , զորոյ իբրև անցանիցէ՝ ոչ ինչ գտանել զհետս կամ զյիշատակ։

Անձն նորա վարակեալ է ախտիւք .

կամի խիթ գործել, և ոչ շարժին ձեռք նորա ։ 'ի խաւարի ազխտութեան դան_ դաղեն միտք նորա, և խորհուրդք նորա շփոթեալք են ։ յօժարափոյթ փափա_ գէ թեւակոխել յիմաստութիւն, այլ ոչ գիտէ ճրագես պատրաստեալ ։ ցանկայ ուսանել 'նոււ, և չկամի աշխատել և գիւտեն նորին ընկանել ։

Տուն նորա թափուր յամենայն բարե_ գործութենէ ։ Ծառայք նորա վատնեն և կարգին, և ինքն 'ի կորուստ ընթանայ ։ ան_ տանէ աչօք իւրովք և լսէ ականջօք զկատ_ նումն ընչից իւրոց ։ զգլուխ իւր շարժէ, և ըղձայ ուղղել զամենայն բարիւք կար_ գաւ, այլ կամք նորա չեն կամք հաստա_ տունք ։ մինչև վտանգք և կորուստ աղքատ_ ութեան հասցեն 'ի վերայ նորա իբրև ըղ_ միրիկ փոթորկեալ, և ամօթով և ապա_ շաւանօք իջցէ 'ի դժոխս ։

Դ.

## ՆԱԽԱՆՁԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Եթէ փառաց ծառաւի իցէ անձն քո, և քաղցր են ականջաց քոց նուագք գովու_

թեան , ամբարձ զանձն քո 'ի հողոյ այսր յորմէ առեղծեալդ ես , և ուղղեա զքեզ 'ի բարձունս առ ինչ մի արժանի գովու_ թեան :

Կայծից այդ երկնաբերքդ՝ սերմն փո_ քրիկ էր յառաջագոյն ամփոփեալ 'ի սիրտ երկրի :

Յորում պայմանի կենաց միջնակեցար՝ մեա գիր առաջին լինել 'ի նմին , և մի ու_ մեք թողուցուս զեր 'ի վերոյ անցանել զքև 'ի բարերարութիւն . մի արկաներ նա_ խանձ ընդ յաջողութիւն այլոց , և յաժա_ րագոյն 'ի գործ արկցես զբնատուր քո ձիրս :

Մի ցանկար նկուն առնել զհակառա_ կորդ քո վասնուեանն . այլ բարեկամու_ թեանն եւեթ ջանա զգել զնովաւ . որպէս զի եթէ և ոչ յաջողեսցի քեզ զանցանել զնովաւ՝ փառաւորեսցիս և գովեսցին ջանք քո :

Ճիգն ուղղութեանց վերամբառնայ զհոգի մարդոյ յանձին իւրում . անձնուկ մեծ է նմա ժառանգել համբաւ բարի , որպէս երկիւղար յոխորտ որ խնդութեանց ընթանայ յորս և յառաջարկեղ :

Բարձրանայ նա որպէս զարմանալի զի_ մակալ բնութեան հողմոց , և խրոխ զար_ ծուի սլացեալ 'ի բարձրութիւնս երկնից

Ճախրէ , և 'ի պայծառութիւն արեգա-կան ակնկառոյց լեալ աչօք :

Ի գիշերի յերազանայ և տեսանէ զարս անուանիս յուղղութեան . և 'ի տուէ ցանկալի է նմա ընդ հեռս նոցա գնալ :

Երկնէ 'ի մտի խորհուրդս մեծամեծս , և ցնծայ 'ի կատարման նոցին . և համբաւ նորա ընթանայ 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի :

Բայց սիրտ առն նախանձաւորելի լցեալ է լեղւով դառնութեան . լեզու նորա մխեալ է 'ի թոյն , և յաջողութիւնք ըն-կերին խռովեն զնա :

Նստի յանկիւնս տան իւրոյ տրտմեալ և նեղեալ . զի բարութիւնք այլոց՝ չարիք են նմա :

Ոխ և չարակամութիւն բունեալ են 'ի սիրտ նորա , և չիք նմա տեսանել զանդորր խաղաղութիւն :

Խոնարհեցուցանել նկրտի զամենեսին որք բարձրանայցեն քան զանձն իւր . և զամենայն գործս նոցա 'ի խոտորնակ մի-տս տանի :

Ընդունի հակէ 'ի քէն և 'ի չարիս , և ատելի եղեալ հալածի 'ի մարդկանէ . և որպէս զսարդ յոստայն իւր կապեալ կծկի :

## Է.

## ԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Լուր ձայնի զգօնութեան . ունկն դիր խրատուց նորա, և գանձեա զնոսա 'ի սրտի քում. զի յօրէնս նորա հաստատեալ է ամենայն . նովաւ կան ամենայն առաքինութիւնք, և նովաւ ուղղին կեանք մարդոյ ։

Արկ սանձ լեզուի քում և պահապան շրթանց քոց, զի մի 'ի բանից քոց խռովեսցի անձն քո ։

Որ այպանակատակ լինի կաղին, տեսցէ՝ գուցէ և ինքն կաղայցէ ։ Որ վաղվաղէ խօսել զթերութեանց այլոց, լուիցէ և զիւրան նախատանօք հանդերձ ։

Ի շատախօսութենէ ծնանի ապաշաւ . և լռութիւն աներկեան կայ ։

Շաղակրատն գառնութի է ամենից . 'ի շաղփաղփանաց նորա ապականին լսելիք, և յորդութեամբ բանից հեստախաղաղ ընկղմի զգուշաւորութիւնն ։

Մի գովեր զանձն քո, զի ամօթ և ատելութիւն անկանին 'ի վերայ քո . և մի

ծառայ առնիցես զՆա, զի մի զանձն քո 'ի վտանգ արկանիցես :

Լեզու է բարեկամութեան՝ ծառայ երգիծանաց. և որ ոչ արկանէ դուռն բերանոյ իւրում՝ հանապազ 'ի տագնապի կայցէ :

Կալ վասն քո զկարևորն և զգանձագէտ քումդ միշտակի, և մի՝ ծախիցես որ ինչ և 'ի ձեռն անկանիցի քո. որպէս զի մինչ թառեացիս 'ի ծերութեան քում 'ի վերայ մթերիցն զոր ամբարեցեր 'ի մանկութեան :

Ագահութիւն ծնող է չարեաց. իսկ չափաւորութիւն՝ քաջ հոգաբարձու և ստացական լինի ուղղութեանց :

Մի լինիր ձեռնամուխ յոր ինչ ոչ անկանի քեզ. թող պաշտօնէից զխնամս պետութեան :

Մի բազում ծախս առներ վասն զբօսանաց, զի մի առաւել առաւելացես 'ի զբօսոյն քան ընկերեալս 'ի վայելուն :

Մի առր բարբառութեան փախչել զաղաւաղութեան քո, և մի լինութեան՝ ընձեռս ժամանակութեան կարճել : Յիշխացեալդ լինութի բարեաց կենդանեոյ՝ հասցէն ամէն յորս ողջամբ զարգանաս ջրաւորութեան :

Մինչդե փորձեալ մի ուժեղ հաստատոր, և մի առ 'ի կարճ թերահաւատիցիս յու

մեղէ . քանզի և այդ ոչ է սիրոյ գործ :

Իսկ եթէ 'ի վերայ հասեր բարեպաշտութեան ուրուք , ժողովեա զնա 'ի սիրտ քո իբրև զգանձ անգին , և եղիցի նա քեզ իբրև զակն պատուական :

Ի վարձկանէ մի ընդունիր շնորհս , և մի ընկերանար չարին . զի մի զայթակղութիւն անցցէ ուղղութեան քոյ , և վնաս հոգւոյ քում :

Մի լիցիս վարդապետ 'ի ծառայել կենց՝ որում յետոյ կարօտ լինիցիս . և մի լինիր գիտնագուն 'ի վտանգ՝ յորժամ մարթ է զգուշանալ նախատանութեանց կամ զարհուրանս մասնատանելով :

Ուսիր խոնարհանալ 'ի փորձոյ այլոց , և 'ի վրիպանաց նոցին ուղղեսցես զսխալանս քո :

Մի և 'ի զգաստութեան քում ամենեցիս անձկելով յաջողութեան . քանզի ոչ գիտէ այր՝ զինչ ծնանիցի գիշերին :

Անմիտն ոչ միշտ տարաբաղդիկ լինի , և ոչ իմաստունն հանապազօր բարեբաղդ . սակայն ոչ յիմարին եղիցի երբեք վայելս անթերի 'ի կեանս իւր , և ոչ զգաստն մնացէ 'ի վախճանն մեծաց թշուառացեալ :

## Զ.

## ԱՐԻՈՒԹԻՒՆ

Փորձանք և արկածք, տառապանք և տուայտութիւն, այս բաժին է ամենայն մարդոյ որ գայ յաշխարհս :

Վասն այնորիկ յառաջագոյն պատրաստեա զանձն քո արիաբար. որպէս զի կարող լինիցիս անյաղթօրէն տանել վշտացն՝ որ գալոց են 'ի վերայ քո :

Որպէս ուղտ զի համբերութեամբ տակայ տապոյ և ծարաւոյ, և անխոնջ հատանէ անցանէ ընդ անապատ աւազուտ, այսպէս և այր քաջ անվթար պահէ զառաքինութիւն իւր յամենայն դէպս վտանգաց :

Ազնուական և վեհ հոգւով ծաղր առնէ զշարանենդ հնարիւք բաղդին. ոչ երբէք վհատեալ լքանի մեծամեծ ոգի :

Երջանկութիւն նորա ոչ 'ի պարգևս բաղդին պատասխան կայ. վասն որոյ և ոչ զանգիտէ 'ի խէթի հայելն նորա :

Իբրև լեառն վիմեղէն զետեղեալ 'ի ծովու՝ անդրդուելի կայ 'ի բաղխել 'ի կոծել ալեացն :

2940 848 9952-57

Նա որպէս զերդ ամուր կառուցեալ 'ի լերին՝ 'ի վեր տանի զգլուխ իւր . առ ոտս նորա անկեալ գնին նետք բաղդին :

Ի տագնապի ժամուն խրախոյս մատուցանէ նմա արիութիւն իւր . և համբերութիւն մնայուն 'ի թիկունս գայ նմա :

Իբրև զնահատակ դիմագրաւ 'ի ճակատամարտս՝ արձանանայ ընդդէմ արկածից կենաց , և բարձեալ զյաղթութեանն արմաւն դարձ առնէ :

Անդորրութիւն հոգւոյ թեթևաբեռն առնէ զամենայն ծանրութիւն թշուառութեանց . և զամենայն ինչ նուաճէ երկայնամիտ ժուժկալութեամբ :

Իսկ այր վատ և հոգի կարճամիտ՝ անձնատուր լինի յամօթ և 'ի նախատինս :

Զահի հարեալ յերերալ տատանելութե՝ ոչ խղճէ 'ի նուաստութիւն կործանիլ . և մեղմիւ խորհրդովք ձգէ յանձն իւր զանիրաւութիւնս :

Որպէս շարժի եղէգն 'ի մեղմոյ օդոյ , այսպէս տատանեալ դողայ անձն նորա 'ի ստուերաց անդամ վշտաց :

Ի հասանել վտանգաց՝ տագնապեալ անձկանձն լինի , և յաւուր նեղութե՝ անկանի 'ի զօրութենէ . յուսահատութեամբ ընկճեալ լքանի անձն նորա :

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССРА им. А. Мясникяна

## Ի.

## ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Յիշեա, ո՛վ մարդ, զի իմաստութիւն Բարձրելոյն ետ քեզ 'ի վերայ երկրի զայդ վիճակ. որ ճանաչէն զախորս քո, եւ քննէ զունայնութիւն ըղձից քոց, եւ բազում այն է զի առ առաւել զթոյն ապախտանէ զհայցուածովք քովք ։

Սակայն բարեխնամակալութեամբն ոչ անհնարին առնէ յերջանկութենէ զերաւայքի բաղձանս եւ զձիգն անտագիւս ։

Հայեաց եւ տես ուստի բղխեն վիշտքն քոց. որ զչարիս զոս, եւ անյաջողութիւնք վասն որոյ զանգատիս. ոչ ապաքէն 'ի յիմարութենէ, 'ի անառակած խորհրդոց, եւ 'ի վայրապար յօժարութենէ կամաց ։

Եւ արդ մի տրտունջ լինիր զվերինն առաչութենէն, այլ զախտ քո փութաջիր ուղղել. եւ մի ասիցես, թէ եր իւն մեծութիւն կամ իշխանութիւն կամ դէպ ժամանակ' բարեբաստիկ լինէի. քանզի եւ որ յայդպիսիկ վայելեն' ոչ են զերծ 'ի հոգոց եւ յանձկութենէ, որ անբաժ կան յայնդամէ ։

Տնանկն ոչ զգայ զծուփս և զշփոթս սրտի մեծատանն. ոչ գիտէ զանձկութիւն և զպատուասիրական իշխանութեան, և չխմանայ զձանձրոյթ պարապոյ 'ի վատասակաց, և ոչ զանձն իւր նեղէ և արտաքոյ ընդ արայման կենաց իւրոց :

Արդ մի նախանձիր ընդ երանութիւն ինչ ուրուք, զի ոչ գիտես զաղէտս գաղտնիս սրտի նորա :

Բաւականանալ փոքուն՝ իմաստութիւն մեծ է. իսկ որ յաւելու զգանձս՝ ընդ նմին ժողովէ և զհոգս. այլ սիրտ գոհ՝ գանձ ծածկեալ, և անփորձ 'ի վշտաց :

Ոչ օգնեսցեն մթերք ընչից երջանիկ առնել զքեզ. յորժամ զրգանք և հրապոյրք յաջողակ բաղդի կապտեսցեն 'ի քէն զարդարութիւն և զխոնարհութիւն, զգութ կարեկցութեան և զպարկեշտութիւն :

Զայս գիտելով ծանիր զի անխառն և անապակ երանութեան բաժակ ոչ է արբումն մարդոյ մահկանացուի :

Քանզի յառաջարկեալ առաքինութեանց կարգեաց զմարդ աստուածութիւնն վերին՝ զերջանկութիւն նպատակ գիտման ընթացիցն կարգեալ, ոչ ումեք է տուեալ ժամանել առ այն՝ մինչև զընթացսն կատարեալ, և ապա առնուցէ զյաղթութեանն պսակ 'ի յաւիտենից կայանան :

## Ը.

## ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Առողջութիւն, իմաստութիւն և անդորրութիւն ոգւոյ, պարգևք երկնաւորք, այսոքիկ են որ մնացորդս առ երանութիւն կայացուցանեն զմարդ 'ի կենցաղումս :

Եթէ զայդոսիկ ստացար և կամիցիս պահել քեզ մինչև յալևոյթ ծերութեան քո, 'ի բաց արա 'ի քէն զհրապոյրս հեշտութեան, և 'ի սադրանաց նորա փախիր :

Եւ յորժամ զխրախճանութիւն և զզբօսանս իւր ածիցէ նա 'ի լիութե սեղանոյ, յորժամ գինի նորա փրփրացեալ 'ի բաժակի պղպջակս 'ի վեր արձակիցէ ; յորժամ քաղցր դիմօք և զուարթադէմն աչօք հայիցի 'ի քեզ և յորդոր մատուցանիցէ խնդամիտ սրտի վայելել 'ի բարեկենդանութեան. ահա հասեալ է քեզ փորձութեան ժամ. վասն որոյ զգոյշ կաց և մի տար դրդուել զգաստութեան քում 'ի պահպանութենէ :

Քանզի ցանկալին ցանկալի հեշտու_

թիւնքն զոր խոստանայ քեզ՝ փոխեսցին 'ի մոլութիւն. և վայելք նորա երագեն յախտս պէսպէս, և 'ի վախճան կենաց ընթանան հանապազ:

Հայեաց շուրջ զքեւ և տես զբազմականս կոչեաց նորա. և 'ի դիմացն ըերկրեցելոց ծանիցես զօրացեալն ատ 'ի նմանէ տառապանաց թելադրութեանցն:

Ցեաւ քանի հիւծեալ և մաշեալ են մարմինք. հիւանդագին կենաց և վէհերոտ անձամբք տառապակեալք նեղին:

Նանրատառապատուկ աւուրք վշտաց և ժամանակ տառապանութեան զան զկնի վարդանցուկ հրճուանաց զեղխութեան. խանդարեալ և պակասեալ է 'ի նոցանէ քաղց և փափագ կերակրոյ. և խահամիրք անուշահամք ոչ են բաւական այնուհետև ախորժակս ընծայել նմա:

Քանզի անձամբ զանձինս զգայարանաց արարին, խրատամբք ժառանգեցին ըզպատուհաս՝ զոր Բարձրեալն հաստատեաց 'ի բնութեան արարածական պարգևացն, 'ի կշտամբանս այնոցիկ որ չարաչար վարեցին նոքօք:

Բայց ո՞վ է դա որ զուարթացին երեսօք և շնորհագեղ ընթացիւք անցանել ձեռն յայն կողմն դաշտին:

Վ՛արդք երփնագոյնք ծիծաղին 'ի դէմս

նորա · բարութիւն անուշից առաւօտին ծա-
ւալի 'ի շրթանց նորա · բերկրութիւն
անմեղութեանն ամփոփեալ յայս նորա
փայլ արձակէ, և 'ի հրճուալից սրտէն՝
երգոց քաղցրաձայնութիւն 'ի վեր հնչէ՝
մինչ յուշիկ գնացիւքն ճեմ առնել շրջի ։

Առողջութիւն անուն է նորա, և գուա-
րթ է ժրութեան զոր ծնաւ 'ի չափաւո-
րութենէ · որդիք նոցա բնակեալ են յայն
կողմն հիւսիսական լերանց Սաննոնեայ ։

Զաւակք արիականք են և ժրագլուխք
և կայտառք · անձնայն վայելչութեամբ և
առայինութեամբ զարդարեալ, որպէս
և քոյրք նոցա ։

Պարապմունք հայրն իւրեանց զարթու-
ցանեն զախորժակս նոցին, և մերն պա-
րէն կազդուրէ զնոսա ։

Խնդութիւն մեծ է նոցա մարտնչել
ընդ առատական կերից, և փառք նոցին՝ յաղ-
թել առավօրեալ չարեաց ։

Զուարճ և կարգաւ են վայելքն նոցա,
վասն այնորիկ և տոկունք են · ոչ յերկա-
րանան 'ի քուն, այլ ննջեն քաղցր և անխը-
դով ։

Անդորր է արիւն նոցա, և միտք ան-
խռովք · զձանձրապատճառ սեւմոց առանց նոցա
ոչ գիտաց բժիշկ ։

Աղքատութիւն ոչ եղև բնակակից որ-

գուցս մարդկան ․ և ոչ եկաց 'ի մտաւոր բնու_ կութեան նոցա աներկեանն անդորրու_ թիւն ։

Արտաքոյ դիմագրաւեալք գնան 'ի նո_ րանոր վտանգս, և 'ի ներքոյ է ստոխ գա_ րանակալ որ մտանէ զնոսա ։

Քաջողջութիւն, զօրութիւն, գեղ և ժրութիւն՝ արկանեն խղձս ցանկութեան 'ի սիրտ մոլեգին սիրոյ ։

Եւ յարուցեալ կանգնի ընդ սաղմա_ թաղուար՝ հոլանոյսն իւրով ․ փաղաք_ շանօք առ ինքն ձգէ զաչս նոցա, և սա_ րածանէ զթակարդս փորձութեանց ։

Գիրգ և փափուկ է մարմնով, և փարելի անուշեամբ ․ հանգերձք նորա պչրանօք փերևերանեալ ․ այլ նորա պաշտօնու_ թիւն բարբառոյն, 'ի գիրկս նորա գարտա_ նեալ նաւի հրապոյր նենգաւոր ․ մա_ տամբ նշանացի առ ինքն կարդայ, գեղով երեսացն ըմբռնէ զնոսա 'ի սէր իւր, և համոզիչ քաղցրաբանութեամբ լեզուին նկրտի արկանել զնոսա յորոգայթ ։

Փախիր փախիր 'ի քաղցրաբան բերա_ նոյն, և մի տար զականջս քո 'ի հրապոյրս զմայլեցուցիչ ձայնի նորա ։ Եթէ աչք քո հարան 'ի սիրակաթ աչս նորա, եթէ լը_ ւար հեշտալուր ձայնին, եթէ գիրկս ար_ կանել փարեցաւ զքեւ ․ ապա պարտաւոր_

գեալ անձերծ պահեսցէ զքեզ 'ի կապանս իւր :

Ամօթ և անարգանք 'ի վերայ եկեսցեն . հիւանդութիւն և անանկութիւն , տառապանք և տանջանք մի դանդաղեսցին :

Անժամանակ լեալ 'ի տափանաց , յամբարելոյ 'ի գրգանէր խանդաղատանաց , մեղկութեամբ և հեղգութեամբ տուայտեալ , զօրութիւն և առողջութիւն պակասեսցին 'ի քէն , և եղծցի վայելուչ շինուած մարմնոյդ . ապականաւոր լիցին ամք կենաց քոց , և չիջելափառ աւուրք քո . բազումք եղիցին մեծութք ցաւոց քոց , և ոչ ոք կարեկից լինիցի քեզ :

Բայց որք կեանն չափաւոր ժուժկալութեամբ , առողջութիւն զօրացուցէ զջիլս նոցա . ոյժ կորովոյ յանկերս նոցա բնակեսցէ , և 'ի գործս վաստակոյ պարապեալ գտանուցեն զօր հանապազ :

# ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

## ԿԻՐՔ

### Ա.

### ՑՈՅՍ ԵՒ ԵՐԿԻՒՂ

ՔԱՂՑՐ են խոստմունք յուսոյ քան զվարդ գեղապարուսիկ , և սատարին՝ հրապոյրք անձնկալութեան : Բայց սպառնալիք երկիւղի ահընկէց լեալ պակուցանեն զմիտս :

Այլ դու զգոյշ կաց , մի ՚ի խաբս յուսոյ ըմբռնիցիս և մի յահէն սպառաբեկ լինիցիս՝ այլ ժրացիր կատարել զյառաջեղեալ բարին և զուգիցն , որպէս զի անխռով սրտիւ ՚ի գլուխ հարցիս յաջողակացն և անյաջող արկածից :

Զայր բարի ոչ զարհուրեցուցանէ երկիւղ մահու . զարմն զնեա քո յանխրաութենէ , և ոչ անկցի ահ ՚ի վերայ հոգւոյ քո :

Յամենայն դէպս ձախողութեանց՝ որ գայ անհնարութեամբ քաջալերեա զանձն քո, և մի թուլանար. քանզի ոչ ինչ յաջողեսցէ առն յուսահատի։

Մի խռովեր զհոգիդ վայրապար տագնապաւ, և մի տայցես խոլական ցնորից տառապեցուցանել զմիտս քո։

Զարկածս վտանգաց ծնանի երկիւղ. իսկ որ բարեյոյսն է՝ անձամբ անձին օգնական լինի։

Որպէս ջայլամն հալածեալ զի թագուցանէ զգլուխ իւր, և նշաւակ կայ 'ի թիկանց, այսպէս և երկչոտին խռովք 'ի վտանգս մատնեն զնա։

Յոր ինչ անձեռնհաս համարիցիս զանձն քո, զնոյն անհնարին առնէ քեզ անյուսութիւն. բայց որ համբերէ մինչ 'ի վախճան, յաղթող գտցի ամենայն արկածից։

Յոյս սնոտի պատրեալ ըմբռնէ զմիտս անմտին. բայց որ իմաստունն է՝ ոչ ընծայէ հաւատս և ոչ ընթանայ զհետ նորին։

Յամենայն իղձս փափագանացն քոց՝ բանն առաջնորդ լիցի քեզ. և մի քան զկարծիս հնարաւորութեան անդր ձգտեցուցանես զանհնարութիւն. որպէս զի յաջողեսցին քեզ յոր ինչ և ձեռն արկցես,

եւ յանյաջողութեան ելից՝ անսասան կացցես ։

Բ.

## ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Մի՛ թող տացես խնդութեան տարապայման սաստկութեամբ յիմարեցուցանել զմիտս քո. եւ մի՛ տրտմութեամբ ծանրաթախիծ անձկութեամբ, խռովեալ սրտաթափ առնել զքեզ ։

Զգոյշ լինիջիր շնորհացն զոր մատուցանէ քեզ աշխարհ, զի թէ այնպէս բերկրանս երեւեցուցանել, եւ զխոռն մի կարեացն այնպէս դժուարակիր՝ մինչեւ զրդուեցուցանել զքեզ 'ի զուգակշիռ չափաւորութենէ ։

Տես անդանօր զառոն հրճուանաց՝ գեղայօրէն զարդարեալ արտաքուստ երեւելի տեսլեամբ. եւ 'ի մայնից խոկ բերկրութեանց ծանիցես զայն ։

Ա՛ռ դրան նորին կանգնեալ համանմանոյն 'ի ձայն քաղցր կարդայ զամենեսին որք ընդ այն անցանիցեն. ցուցս առեալ ծամփս հարկանէ. 'ի ծաղր համառնէ ։

Հրաւիրանաւ կոչէ զնոսա գալ 'ի վայել-

լու հեշտութեանց կենցաղոյս , որք ընդ հովանեաւ խնոցս եւեթ առէ յարկաց գը-տանեն :

Այլ դու մի մնասցես ընդ գրունս նորա , և մի լինիցիս զոմնոց որոց յամախեն ա-նա :

Որք զանձինս մանկունս ուրախութե կոչեն , ծառայ է ՚ի շրթունս նոցա , և զուարթութիւն ՚ի դէմս . այլ մոլութիւն և չարչութիւն յամենայն գործս նոցա :

Ոչ սերմանս կապեալ ընդ իրեարս և ձեռն ՚ի ձեռն ձգեալ զթեն ՚ի չարիս , վտանգք պատրաստեալ կան զնոքօք , և անդունդք կորստեան ՚ի ներքոյ ոտից նո-ցա բացեալ սպասեն :

Հայեաց արդ և տես յայն կողմն , ուր հովիտն վարդագուրեալ ՚ի անկոց հովա-նաւորաց , որք ծածկեն զառուն ագոյ յա-չաց մարդկան :

Խնդքն ՚ի միջի սիրտ ՚ի բերան յազուոյ հանէ խորքն հառաչանօք . սիրէ զընդ-կանալն ընդ թշուառս և ընդ ներդեալս երկրի :

Ընտանեկին ունի յուշոյ մնացն զամենայն աղէտս կենաց և ողբոյ անդադար . զաղ-փաղփումն և չարաչարանքն մարդոյ՝ անըն-դունելի գրուիք են ձառից ՚ի շրթունս նո-րա :

Զարիս եւեթ ծնանին առ նա սպասաւո_ ծականն ընութիւք համարելն . և զամենայն յոր ակն արկանէ՝ նկարեալ կարծէ թաղ_ ծութեամբ մտացն խորոց . Հայն քրթմըն_ ջանաց ախորժելութեանէ զբնակութիւն նո_ րա զախս և զգիշեր ։

Մի հուպ լինիր 'ի տաղաւար անդր , զի ըն է թունիս . շունչ նորա ապականէ զպատուղս , և չարաչարեցուցանէ զծաղկունս որք անուշահոտ և պայծառագեղն գոր_ ծեն զպարտէզ կենաց ։

Հեռացեալ 'ի տանէ ծառոց՝ մի թողու_ ցուս ամիջ քոց խառնել ընդ ճանապար_ հաց ստուերամած օթեւանին . այլ խնդրեա խնամով ընդ միջինն հեռանել պողոտայ , որ ընդ հեշտին վերելս հանեալ կառուս_ ցէ զքեզ 'ի խաղախի բաւականութեան ։

Ընդ ամս բնակէ անդորրութիւն կե_ նաց , ընդ ամս ազատութիւն և զխո_ րութիւն . խնդամիտ է, այլ ոչ անառակ սպա_ ռնանաց զհեա երթեալ . անծագում_ ծու, այլ բարեհամբոյր . անխռով և անայլ_ այլակ 'ի վիշտս և 'ի հրճուանս կենցաղոյս ։

Աստուած խրախ 'ի բարձր զխառնեայէ եղեալ ընծեցեալ զամենատութիւն և զհիգու_ թիւն այնոցիկ , որք ըստ մարմնեղոյ ցան_ կութեան աղաղց խորհեանց՝ համեղ անձանցն 'ի զեղխութի ընդ ընկեր ուրախանային .

կամ թէ գեղեալք 'ի հողոյ և յանձկու-
թենէ սրտի, մինչև զամենայն աւուրս
կենաց իւրեանց 'ի սուգ' ընդ աղէտս և
ընդ տառապանս որդւոց մարդկան ։

Հայեաց 'ի նոսա և գթա յողորմելիսն,
և 'ի վիճակն թշուառութենէ նոցին ուսիր
ընդ անտարբերութեան գնալ շաւիղ ։

## Գ․

## ԲԱՐԿՈՒԹԻՒՆ.

Որպէս փոթորիկ հողմոյ զի ուժգին
բռնութեամբ արմատախիլ առնէ զտուն-
կըս և վեր 'ի վայր եղծանէ զանախտ բնու-
թեան, կամ որպէս 'ի թափոյ բուռն սա-
ստկութիւն երկրի' տատանեալ տապալի
քաղաքամբին, այսպէս զայրոյթք առն
բարկացողի տարածանեն զիւրեան մնաս
չարեաց․ կորուստ և վիշտք եւեթ մնան առ
նմա ։

Մի մոռանար զանձինք ակարութեան,
և ներողամիտ լիջիր թերութեանց այլոց ։

Մի մատներ զանձն քո 'ի կիրս բարկու-
թեան․ զի զինչ այնու գործիցես, բայց
սուր ընդ անձն քո մխել, կամ վէրս 'ի

սիրտ բարեկամի գնել ։

Եթէ փոքու նախատանաց համբերեսցես, զգածութեան քում գրեսցի այն շնորհ. և եթէ ընկլիցես 'ի մեաց, սիրտ քո հանդիցի և միտք քո ոչ լիցին այլոց ապատուագէտ ։

Չիցէ քո անանալ զայլ 'ի ցասման կապտեալ 'ի բանէն մեաց. այլ մինչ ալթունդ ես միայ՝ զմոլեգին ցասումն այլոց կալ քեզ 'ի խրատ զգուշութեան ։

Մի՛ ձեռն 'ի գործ արկաներ 'ի բարկութեան. ոչ ապաքէն անմտութեան է նաւարկել ընդ ծով 'ի խաւարութեան մրրկայոյզ ալեաց ։

Խոհական խորհրդովք նուաճեա ըզզժուարատանձն բարկութիւն. խոտորեա 'ի պատճառաց սրտմտութե և ցասման. և եթէ պատճառք լինիցին՝ զգոյշ լեր անձինդ ։

Անմիտն սրտմտի ընդ յանդգնալ այլոց. այլ զգօնն առ ոչինչ գրեալ ծիծաղի զնախատանս զոր լսիցէ ։

Մի՛ օտարկալ լիցիս վրէժուց յանձին քում. քանզի ոչ մխիթարեալ զանձն տանջէ, և ապականէ զբարի բարի յօժարութիւնս սրտի ։

Դիւրապատրաստ լեր 'ի ներումն քան 'ի հատուցումն թշնամանաց. որ պարապոյ

ապառնէ առնուլ զկեանս իւր՝ անձին իւ_ րում զայրանական լինի, և 'ի գլուխ իւր թափէ զչարիս :

Որպէս պատասխանին առ անձն զայրա_ ցեալ, իբրև զջուր ածեալ զհրոյ՝ շիջու_ ցանէ զբորբոքումն նորա, և 'ի թշնա_ մւոյ բարեկամ քեզ լինի :

Թէ գիտէիր քանի՛ սակաւ ինչ է արժա_ նի բարկութեան, զարմանայիր արդեօք եթէ բաց յանձնանաց որ 'ի ցասումն բըր_ գիցի :

Սկիզբն բարկութեան՝ անմտութիւն և յեղյեղուկ բարք մարդոյ. այլ կատարած նորա արդարև ածէ ապաշխարս և ապա_ շաւ :

Ընդ հետ անմտութեան մօտագոյն գնայ ամօթ. և 'ի թիկունս բարկութեան արագ հասանէ խայթ մտացն իւրն :

## Դ.

## ԳԹՈՒԹԻՒՆ

Որպէս գարուն զի սփռէ յերեսս եր_ կրի զտունկս դալարագեղ և զծաղիկս գե_ ղազարդս, որպէս բարերեր առատու_

թիւն ամպարայնի , զի առատս և հարուստ գործէ զհունձս . այսպէս ձիրք զթութեան պարգեւս բարիս ցօղեն 'ի վերայ որդւոց մարդկան :

Որ կարեկից լինի տառապելոյն՝ զանձն իւր հաճոյ ընծայեցուցանէ . իսկ որ անկարեկիցն է , հաճոյ լինել ոչ ունի :

Ոչ անսայ մտադրուծ մռնչելոյ գառանին , և ոչ սիրտ ապառաժ ընդ աղէտս այլոց խանդաղատի :

Բայց արտասուք գորովագութ աչաց քաղցր են քան զառաւօտին ցօղոյ՝ որք 'ի ծաղկից վարդից կաթեն 'ի սիրտ երկրի :

Մի ունկնախից լինիր առ աղաղակս ողբոց նեղելոյն և անանկի . և մի խստացուցանիր զսիրտ քո ընդ արկածս անմեղին :

Յորժամ որբն անտերունչ յողբս անկեալ աղաղակիցէ զքեզ . յորժամ հարստահարեալ և վշտալից սիրտ այրւոյն ողորմագին արտասուօք զքոյդ խնդրիցէ ձեռնտուութիւն , գութ քո անկցի ընդ տառապանս նոցին , և լքելոց և անկելոց եղիցիս ձեռնտու և ապաւէն :

Եթէ տեսանիցես զմերկն ցրտահար՝ վայրապար շրջելով 'ի փողոցի , բաց զգութս սրտի քո մարդասիրապէս , և 'ի թևս բարեգթութեան ժողովեալ զնա՝ թափեա 'ի մահուանէ , և կեցցէ անձն քո :

Մինչդեռ անանկն յոգւոյհանութե-հիւանդագին կողկողի 'ի մահիճս և քա-ղին ողբք եղկելւոյն 'ի զարհուրանաց ըս-տորերկրեայ բանտին, կամակերգորդ գլուխ ծերութեան առ քեզ 'ի վեր ամբարձցէ զնուաղելոց աչացն անկարողութիւն, զը-թութիւն 'ի քէն ժամելով. ժուժայցես տառապանին և փափկանաց շուայտութի և զեղխութեանց, և անփոյթ առ չքա-ւորն՝ անզգայ ընդ աղէտս նեղելոյն լինել:

Է.

## ՍԷՐ ԵՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

Փախիր, պատանի դու, փախիր 'ի հրա-պուրանաց անառակութեան, և մի տար ցանկասիրի գերել զմիտս քո:

Յիմարութիւն ցանկութեան առաջնոր-դէ զքեզ 'ի հետոց նորա. և մի մատնիցես զանձն քո կորստական կուրութեան ցա-մանն նորա:

Մի տար զմիտս քո 'ի քաղցր հրապոյրս նորա, և մի թողուր հոգւոյ քում ըմբըռ-նել 'ի խաբէութիւն գեղոյ նորա:

Քանզի զեղխութիւն ցամաքեցուցանէ

զգաստս առողջութեան՝ որոց անկն է խառնել ընդ առուս հեշտութեան, և ընդ հուպ սպառուի աղբիւր նորա ։

Յարբունս ծաղկեալ տիոց 'ի վերայ հասանէ քեզ ծանր ծերութիւն, և յառաւօտու կենաց քոց խոնարհեսցի 'ի մուտս արեգական քո ։

Այլ գեղ կնոջ առաքինութեամբ և ամօթխածութեամբ զարդարեալ՝ առաւել փայլէ քան զաստեղս երկնից ։

Աչք իւր քաղցրահայեացք որպէս ըզ-տատրակի, անմեղութիւն և ճշմարտութիւն բնակեն 'ի սրտի նորա ։

Մեղր կաթէ 'ի համբուրից շրթանց նորա, հանդերձ բուրմամբք անուշից ։

Ի մաքուր խանդաղատանաց սիրոյ՝ մխիթարի և ազնուագոյն եւս լինի սէրն ։

# ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

## ԿԻՆ

ԼՈՒՐ դուստր ձայնի զգօնութեան, և զպատգամս ուղղութեան սպասաւորեա 'ի սրտի քում, և առաւել պայծառասցին շնորհք քո. և գեղ դիմաց քոյ նմանեսցի վարդի, որպէս և պահեսցէ նման նմին զփափկութիւն իւր և 'ի թառամել անդ ծաղկին:

Յառաւօտու կենաց քոց և յարբունս մանկութեան՝ յորժամ բազմաբազումք իցեն աչք որ զքեզ քննիցեն, զգաստ լեր 'ի լսել բանս հրապուրանաց նոցա. զգոյշ լեր սրտի քում, և մի տար ունկն սիրախրախ պատրանաց նոցա:

Ծանիր զքեզ 'ի համընկերութիւն առն հաստատեալ, և ոչ գերի ցանկութեան նորա. 'ի նպատակ նմին տուեալ են քեզ կեանք, 'ի միխիթարել զնա խանդակաթ սիրով, և խնամոց նորա փոխարէն հատուցանել քաղցր գգուանս:

Ո՞վ է 'ի կանայս որ գրաւեալ ունի ըզ-

սիրտ առն իւրոյ, և հնազանդ առնէ զնա ընդ լծով սիրոյ :

Ահաւասիկ ձեռն նա ՚ի հանդիպոյ . անխոս մաքրութիւն հանդերձ անմեղութեամբ մտացն զխոնարհութեան՝ և պարկեշտութեամբ զինչ փայլեն ՚ի նմա :

Ձեռք նորա ՚ի խնդիր են գործոյ , և ոտք նորա ոչ սիրեն արտաքոյ տանն դեգերել :

Հանդերձս զգեցեալ է չափ վայելչութեամբ , յարգեալ ժուժկալութեամբ . հեզութիւն և քաղցրութիւն իբրև զթագ փառաց կան ՚ի գագաթան նորա :

Բարձր են բանք լեզուի նորա , անուշութիւն մեղու կաթէ ՚ի շրթանց նորա :

Համեստութեամբ համեմեալ են ամենայն բանք նորա . Ճշմարտութեամբ և գթասիրութեամբ են պատասխանիք նորա :

Հլութիւն և հնազանդութիւն են վարք կենաց նորին . հանդարտութիւն և երջանկութիւն վարմունք նորա :

Խոհեմութիւն յառաջընթաց լինի ՚ի գործս իւր , և առաքինութիւն կայ յաջմէ նորա :

Ջանք և զգաստութիւն բարբառին այք նորա , այլ զգօնութիւն առեալ զգաւազանն արքունի՝ բազմի ՚ի վերայ յունիցն նորա :

Առաջի նորա ամի 'ի բերան կարկի լեր-րին, և յաւէտ լռութեան նորա պապան-ձի ։

Ի յաճախել բարեբաստնեաց, և յընթա-նալ համբաւոյ ընկերին բերան 'ի բերա-նոյ, եթէ ոչ առ բարեպաշտութեան և բա-րեկամութեան բացցէ զբերան իւր, մատն լռութեան հանգուցեալ կայ 'ի շրթունս նորա ։

Կարանք բարութեան են սիրտ նորա, վասն որոյ և ոչ զումպէ չարութեան կար-ծիս առնու ։

Երջանիկ է այր որ եգիտ զնա, երա-նելի են մանկունք որ կոչիցեն զնա մայր ։

Ներքին վերակացու է տանն, և ամենայն ինչ յանդորրութ. խոհականն իմաստով հրա-մայէ, և լսելի լինին բանք նորա ։

Վաղաջարոյց լինի ընդ առաւօտս, և խորհի զտնտեսութիւն գործոց իւրոց, և ամենեցուն կարգելով տայ զարժան սպա-սաւորութեան գործ ։

Զբօսանս համարի զխնամս տանն, և 'ի նոյն զբաղի ամենայն ջանիւ փութոյ․ վայելչութիւն և չափաւորութիւն ամե-նայն ուրեք ընդ յարկաւ նորա երևին ։

Ճրագլուխ տնտեսութեամբ պարծանս լինի առն իւրոյ, և գովեստից լսէ անդար-րու բերկրութեամբ ։

Խնամատութեամբ վարժէ զմիտս տղայոց իւրոց, և բարեբարոյ վարուք իւրովք օ_րինակ ուղղութեան ընծայէ կենացն նոցին։

Օրէնք են մանկանց բանք շրթանց նո_րա. անկեղծութիւն իւր հլու և կամա_րարս առնէ զնոսա ։

Ձայն ածէ, և ճեպին ծառայքն. մա_տամբ ազդ առնէ և վճարի գործն. քան_զի օրինաց սիրոյ անսան սիրտք նոցա, և բարեկարգ հրամանք նորա թեւս տան զար_շապարաց նոցին ։

Ոչ վերանայ 'ի յաջողութիւնս հողմով ամբարտաւանութեան, և գեղջամանկուն համբերութեան պատէ զվէրս բաղդին ։

Խրատք և գութք նորա նուաղեն և ա_մոքեն զխռովութիւն և զվիշտս և զարկա_ծըս. մերձեալ 'ի սիրտ նորա՝ մխիթարի այր իւր ։

Երանի՜ առն որ առ զնա 'ի կին, և որ_դւոյ որ կոչիցէ զնա մայր իւր ։

# ՊՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳԱԿԱՆՔ

### Ա·

### ԿԱՆԱՅՔ

ԸՍՏ խրատու առաքելութեանց Տեառն առ քեզ կին ։ Առցես քեզ կին մի , և ըստ օրինաց զխնամոյն ընկերութեան մարդկան ։ Տէր խնամեսցի , և մի վաղվաղակեսցես յըն- տրել քեզ կին . քանզի ընտրութեամբ զգուշիկ գտցես յաւիտեան զանդորրութիւն կենաց ։

Կոյս որ սիրէ ժամանակաւ՛ն ընկել 'ի պչրանս՝ յարգ և 'ի զարդ զգեստուց , կամ ընդ դեղ անձին իւրոյ սիրանայցէ , և զօ- վեստից որոտորդ իցէ , կամ սաէպ ծիծաղիցի և բարձրաձայնս բարբառիցի , որոյ սար իւր ոչ զգաստացիցին 'ի տան հօր իւրոյ , և այր նորա ընկենիր յածիցին 'ի դէմս մարդկան . ընդ այնպիսւոյն՝ թէպէտ և

որպէս զարեգական փայլիցէ՝ և անդադար մի ակն արկանիցես ընդ տեսիլ գեղոյն , և մի գտանիցեն զարշապարք քո ընդ շաւիղս նորա , և մի ստոր հրապուրանք գերեսցեն ցուցակութիւնք մտաց զանձն քո :

Այլ եթէ գիւրադրդած սրտին հաղորդ իցէ և քաղցրութիւն բարուց , և ներքինք մտացն՝ համաձայնագոյն քեզ իցեն քան զարտաքին երևոյթ վայելչութեան , զնա տարցես 'ի տուն քո . քանզի այնպիսւոյն վայել է լինել քեզ մտերիմ, և կենաց քոց կցորդ , և ամուսին գրկաց քոց :

Իբրև յօրհնութիւն երկնաւոր գութ արկեալ 'ի վերայ այնպիսւոյն , սիրես խնամով և արահետ զգուշութեամբ . և լեր նմա սիրելի բարեմոյն բարուք :

Տիկին տան քո է նա , վասն այնորիկ անձնութեամբ մատիցես առ նա , որպէս զի և ծառայք քո հնազանդ լինիցին նմա :

Մի վայրապար կամեր և խափան լինել բաղձանաց նորա : Հաղորդ է վշտաց քոց , մտանակից լիցի և վայելչեն քոց :

Հեզութեամբ խրատես զախազանան , և մի խստութեամբ պահանջեր 'ի նմանէ ցածութիւն :

Մի թագուցաներ 'ի նմանէ զծածուկս սրտի քո , և ոչ անձնամաման լինիցիս . քան-

զի անկեղծութեամբ են խորհրդակցութիւնք նորա ։

Մի անխրատելոյս անկողնոց նորա , քանզի մայր մանկանց քոց նա է ։

Ի ցաւս և յախտս եթէ տեսանիցես զնա ջերմեալ , կաթոգին սիրով դիւր արա վշտացն . Հայեցուածք կարեկցութեան ամոքեսցեն զտառապանս նորա , և սիրալիր անձնուրացութիւն մի հզօրագոյն իցէ յապաքինել քան զամեն բժիշկս ։

Տանիր զխափանութիւն և զանկարութիւն բնութեան , և թերութեանց նորա համբերեսցես ներողութեամբ . մի մոռանար և զքոյդ անկատարութիւն անձին ։

## Բ.

## ՀԱՅՐ

Ծնողդ դու , տե՛ս քաջ որպիսի՛ աւանդեցաւ քեզ աւանդ . պարտք են քեզ անուցանել զոր ծնարդ ։

Բարութեան և չարի մանկանդ դու ես պատճառք . և քո ընծայեսցի մանուկդ պիտանացու կամ անպիտան առ ընկերութիւն մարդկան ։

Կանխեա դատախազակել զորդի քո , և կամենեսցը ճշմարտութեան հաստատեա ըզ-միտս նորա :

Քննեա ուշով զընդդարձակ բերմունս յօժարութեանց նորին , և ուղղեա 'ի սկս տղայութեան , զի մի ընտաներեալ ստո-րութիւնն չար ընդ հասակին զարգասցի :

Ուղղաբերձ ամենեցուն բարձրասցի նա իբրև զեղևին 'ի գլուխ լերանց , և դիտեսցէ զաղաթամին զծառոյն անտառաւ :

Որդի անխորհուրդ՝ նախատինք հօր իւրոյ . որդի առաքինի՝ փառք են ամփոփակալոյլ-ալեաց հօր :

Քո է երկիրն , և քեզ մնայ զայն գոր-ծել . և զոր սերմանեսցես՝ զնոյն և հնձես-ցես :

Ուսո՛ նմա զհնազանդութիւն , և օրհ-նեսցէ զքեզ . զհամեստութիւն , և մի կո-րասցի ամօթով :

Ուսո՛ նմա զերախտագիտութիւն , և գտցէ շնորհս . զմարդասիրութիւն , և սի-րելի եղիցի :

Ժուժկալութիւն ուսո՛ նմա և անխախտ լիցի . զխոհեմութիւն , և յաջողեսցի նմա :

Կրթեա զնա յարդարութեան , և պա-տուական լիցի յաշխարհի . յանկեղծու-թեան , և ոչ լիցի արհամարհու այլոց :

Ժիր յարդարեա զնա , և բազմասցին

ինչք նորա • զգթութիւն ուսո՛ նմա, և վեհանձն եղիցի :

Վարժեա զնա ՚ի զգաստութիւնս, և օգտակար եղիցին կեանք նորա • հրահանգեա զնա յաստուածպաշտութեան, և երանելի լիցի ՚ի մահուան իւրում:

Գ.

ՈՐԴԻ

Քննեցէք զգործս Աստուծոյ և ուսջիք զիմաստութիւն • խրատեցարուք օրինակաւ զոր ընծայեն ձեզ արարածք ձեռաց նորա :

Գնա՛ յանապատ որդեակ իմ, և տես յամայութեան զձագ արագլի, և ուսիր ՚ի նմանէ զծերատածութիւն • զի ՚ի թեւս իւր բարձեալ կրէ զհայրն հնացեալ, բնակեցուցանէ զնա յանկոյթ ապաստանի և ջամբէ նմա կերակուր :

Քաղցր են գութք զաւակաց քան զանուշունս խնկոց Եղամացւոց նուիրելոց ՚ի բագինս արեգական. և բուրաստանքն քան զօդս անուշահոտս զոր արձակեանն ալոյս սատակաշունչ ածէ յերեսաց մէկահոտ և

քրքմաւէտ դաշտացն Արաբիոյ ։

Նմանեսցիր զերամախս հօր որ ծնաւն ըղ-քեզ, և զմօր որ սնոյց զքեզ ։

Անուշ բանից որք ելանեն 'ի շրթանց նորա, զի վասն բարութեան քո խօսին. ունելին գիր խրատուց նորա, վասն զի 'ի սիրոյ սրտին բղխեն ։

Պատրաստ առաքուս քեզ վասն առողջութեան, աշխատ եղև վասն անդորրութեան անձինդ. վասն այնորիկ պատուեա զալիս նորա ծաղկեալս, և մի անմաշեցուցաներ զարծաթափայլ հերս ծերութեան նորա ։

Յիշեա զանխեղծ հաւատ մանկութեան քո, և մի մոռանար զեռանդն յօժարա պատանեկութեան քո. և երկայնամիտ լեր տկարութեան ծերացեալ ծնողաց քոց, և մի լքցես անօգնական զհասակն դանդաղեալ ։

Ամփոփեսցես 'ի խաղաղութեան զյա-ւյխտակաւորայ աւուրս նորա 'ի քնարան շիր-մին. և որդիք քո 'ի քէն ուսեալ զխնամս բարեգթութեան, փոխարէն բարիս հա-տուսցեն բարեպաշտութեան քում ։

## Դ.

## ԵՂԲԱՅՐ

Միոյ Հօր որդիք էք դուք. զգուշացեալք նորին խնամոց թեւարկութեամբ. եւ ստինք միոյ մօր դիեցուցին զձեզ։

Կապեա զխորհուրդ քո ընդ եղբարս քո կապանօք սիրոյ, եւ բնակեսցեն ի տան Հօր քոյ խաղաղութիւն եւ երջանկութիւն։

Եւ եթէ դէպք պահանջեսցեն անջատել զձեզ յիրերաց, անմոռաց կալջիք զանլոյծ զօդ արենակցութեան որ պարտականս կացուցանէ զձեզ ի սէր եւ ի միաբանութի. եւ մի լիցի ձեզ զայլ օտար նախապատուական առնել քան զարիւն հարազատ։

Եթէ ձախողեսցի եղբօր քում, օգնեա նմա, եւ եթէ քոյր քո վտանգեալ իցէ վշտօք՝ մի բարձի թողուլ առանց զնա։

Եւ յայսմանէ ոչ պակասեսցէ նորա ընչից հօր քո առ ամենայն տուն իւր, եւ ի սիրել ձեր զմիմեանս՝ խնամք նորա անպակաս լիցին ի ձենջ։

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՊԱՅՄԱՆՔ ԿԵԱՆՑ

### Ա.

### ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԳԷՏ

ԱՍՏՈՒԾՈՅ տուրք են գիտութեանց շը-
նորհք. եւ նա տայ իւրաքանչիւր որչափ
ինչ վայելուչ եւ կարեւոր վարկանի:

Նա ինքն Տէր շնորհապարգեւաց զքեզ
հոգւով իմաստութեան եւ լուսաւոր արար
զքեզ գիտութեամբ ճշմարտութեան. հա-
ղորդս արար զարդեան հանճարոյ քում զի
կրթեսցի, եւ զիմաստութիւն՝ զի առաւել եւս
շահեսցի:

Իմաստութիւն ճշմարիտ՝ ոչ ըստ անձին
պանծայ եւ ոչ զանգիտոք արհամարհէ.
իմաստունն առնէ յերկբայս լինի, եւ ըղ-
կարծիս իւր փոխէ. յամառ է տխմարն
եւ ՚ի կարծիս մնայն անեռեալ պնդի. զա-

մենայն իմաստնոյ գիտել, և անդէն է անձին ազատութեան ։

Նախելի և անարգ են փառք մտապարծից, և ախտ է մոլեկան անձնագով շաղակրատութիւն ։ Այլ գործ է համբերատար իմաստութեանն անսալ յիմարին շաղփաղփանաց, և ներել անմտաց և անօգուտ գործոց ։

Մի մեծամտեր ընդ հանճարս քո, և մի պանծար ընդ բազում հմտութիւն քո ․ քանզի զինչ ունելի է գիտութեան մարդոյ 'ի կուրութենէ և 'ի մոլորութենէ ։

Ճանաչէ իմաստունն զթերութիւն իւր, և խոնարհի և ոչ խնդրէ զհաճոյս իւր ․ իսկ անմիտն սիրանոյ զանխուլ ընդ սակաւաջուր վտակ իմաստիցն, և խնդայ ընդ խիճս զոր ընդ ալեօքն տեսանիցէ, և 'ի վեր ամբարձեալ ցոյցս տայ իբրև մարգարիտս վերբերեալ, և հրճուի՝ գովութեանս լուեալ յեղբարց ։

Պարծի ընդ գիտութիւն ուսմանց իւրոյ ․ իսկ յարժանն՝ անգիտանայ և շամշէ ։

Նա և 'ի շաւիղս իմաստութեան թեակոխեալ՝ զաղանդաւորութեան զհետ երթի ․ և վաստակաբեկ եղեալ ժառանգէ զամօթ, և ինչ 'ի ձեռս ոչ բերէ ։

Բայց հանճարեղն մանկայութեանն զմիտս իւր կրթէ ․ ընդ յառաջադիմու-

թիւն արտասուաց բերկրի , և կենդանա-
գոյն հնարից լեալ գտանի՝ գովութեանց
և փառաց նախամեծար լինի 'ի ժողովըր-
դենէ :

Եւ 'ի վերայ այսոցիկ զառաքինութիւն
առ գերագոյն ուսումն ունի . և ոչ դադա-
րէ յամենայն 'ի կեանս իւր պարապել 'ի
հայթայթանս երջանկութեան :

## Բ.

## ՄԵԾԱՏՈՒՆ ԵՒ ՏՆԱՆԿ

Որ ընկալաւ 'ի ստանէ մեծութիւն
ընչից , և միտս առողջս վարելոյ նոցա
բաւ պէտս , չէք իւրն զնա սիրելի և պա-
տուական :

Զուարթ ակամբ հայի 'ի գանձս իւր՝
իբրև յաժանդակ բարեգործութեան :

Պաշտպան կայ անանկին , և զչարաստա-
հարեալն փրկէ 'ի ձեռաց հզօրի :

Այցելու և կարեկից լինի տառապե-
լոց . քննէ զկարօտութիւն նոցա , քաջա-
լեր և մխիթար մատուցանէ նոցա զգաստ
մաօք առանց սնափառութեան :

Օգնական լինի տկարին , և վարձահա-

տոյց արժանաւորաց · խոնարհեալ զը-բացուցանէ զճշմարտութիւն, ձեռն տայ վաճառականութեան ոգւով, և զամենայն խորհուրդ պխանանի յառաջ վարէ :

Յառաջնեցուցիչ է մեծամեծ գործոց · երկնից նորա բարգաւաճ, և երկրագործն անպարապ 'ի վաստակոց · մատուցանէ 'ի նորոգ ձեռնարկս, և արուեստք 'ի զար-գացումն ընթանան :

Զաւելորդս անդամոյն՝ համարի բա-ժին աղքատաց դրացեաց իւրոց, և ոչ անմասն առնէ զնոսա :

Մեծութիւն մեծանկի ոչ լինի խափան-արար բարեաց կամացն · վասն այնորիկ խնդայ առատաբուռ ուրախութեամբ ընդ ճոխութիւնս իւր :

Վա՜յ այնմիկ է որ անձին միայնոյ գան-ձէ, և միայնակ յօրանայ 'ի բարիս :

Որ առաջնեցուցանէ զանանկս, և ոչ յի-շէ զապաժանարեկ վաստակս նորա :

Յառաջ անցանէ անդրդայութեամբ, և ոչ խռովին աղիք նորա 'ի գութս եղբօր :

Երբեք զկաթնընկէ զարտասուս որբոյն · աղաղակ և հեծութիւն այրեաց քաղցրա-ձայնութիւնք երգոց թուին նմա :

Յագահութենէ խստացեալ է սիրտ նորա · աղէտք և փորձանք այլոց այնու-հետև ոչ ունին ազդել 'ի նա :

Սակայն անէծք անօրինին զհետ նորա ըմբռնեան. զոր հանապազ երկիւղիւ գան_գատէ. խռովք մտացն և զօշաքաղութեան անձինք վրէժս անդադար պահանջեն ՚ի նմանէ վասն զրկելոյ նորա և տառապե_ցուցանելոյ զայլս։

Իբրև ոչինչ մի են տառապանք աղքա_տի առ անհնարին տագնապաւ խղճի գի_տակցութեան անձին նորա։

Բազում իմն է որ մխիթարէ և հաստա_տէ զայր անմեղին։

Մտացն ՚ի ձայն իւր անդորր ողջամ, և ոչ գան նորա արտաքոյծ և հալածական բարձակիցք։

Անդ ոչ արտասուացք զկրեարս մղեն, և ոչ դժգմնելոց լսին աղաղակք։

Հրաժարեալ ՚ի խաչհամէք խորակաց ըն_չեղին, ազատ է և յախտից նորա։

Ո՞չ առաւել քաղցր է ՚ի քիմս նորա հաց իւր. ո՞չ առաւել ախորժ է ջուր ծարաւոյ նորա։ Քաղցունք և անուշաբոյք են նմա յատորիկ քան զամենայն դահամանսն փափ_կանք զեղխելոց։

Վաստակովք իւրովք սնած է զառողջու_թիւն, և հայթհայթէ զհանգիստ անձին, յորմէ անմահն են գիրք անկողինք յու_լացելոց։

Պարկեշտութեամբ չափաւորէ զքաղց

իւր ․ և հանդիստ չափով հեշտալի է նմա քան զամենայն մեծութիւն և զփառս աշ-խարհի ։

Վասն այսորիկ մի պարծեսցի որ հա-րուստ է ընչիւք՝ ընդ ճոխութիւն և ընդ հանդերձանս չքոյ իւրոյ ․ և մի անկեալն յընչից՝ տրտմեսցի և յուսահատ լիցի 'ի տառապանս ․ քանզի հաւասար բաժանէ երկնաւանջիւրոց նախախնամութիւն Բար-ձրելոյն զպարգևս իւր և զշնորհս ։

Գ ․

## ՏԷՐ ԵՒ ԾԱՌԱՅ

Մի արհամարհեր, ո՛վ մարդ, ընդ ծառայ-ութեան քո վիճակ ․ զի հրամանն Աս-տուծոյ է քեզ, և բազում շահք են քեզ յայնմանէ ․ քանզի կորզէ 'ի քէն զհոգս և զաշխատապանս կենաց ։

Հաւատարմութիւն՝ փառք ծառայի ․ հպատակութիւն և ունկնդրութիւն՝ պա-տուական շնորհք են նորա ։

Համբեր յանդիմանութեանց և կշտամ-բանաց տեառն քո ․ և մի ընդդէմ բանս բարբառեսցես 'ի պարսաւագրեալ լինել նո-

րա · որպէս զի ընդունելի լիցի առաջի Տեառն հլուականդ քո լռութիւն :

Մի՛ա գիր օգտի անձանն քում. արթուն լեր 'ի անհանդստութեան գործոց նորա , և հաստարիմ յոր ինչ և աւանդեցաւ 'ի քեզ ·

Խոնարհանակ քո և վարձկանք նմա անկա_նին · անե՛ս մի զրկեսցես զնա · քանզի վասն դոյին հատուցանէ քեզ վարձս :

Եւ դու որ տէրդ ես և իշխան , լեր ար_դար և ողորմած առ ծառայս քո , եթէ անդ ունիս հաւատարմութեան և փութաջան սպաս գտանելոյ 'ի նմանէ , և եթէ հնա_զանդութիւն կամակար պահանջես 'ի նը_մանէ :

Զի մարդ է և նա · թերևս դառ_թեամբ և բռնութբ խռովեցուցանիցես զոգի նորա · այլ երկիւղ ոչ ծնցի զնէր :

Դութ խնամակալեր ընդ կշտամբանս և ընդ խրատունս իշխանականն մեծութեանդ · որպէս զի յանդիմանութիւնք քո գամա_գիւն լիցին 'ի սիրտ նորա , և սպասահար_կութիւն գրաւանս համարեսցի նմա :

Եւ ծառայեսցէ քեզ միամտութեամբ առ երախտեաց , և լուիցէ քեզ խնդու_թեամբ առ 'ի սէր · և մի վերջասցիս յար_դար հատուցանէ վարձուց և հաւա_տարմութեան նորին :

## Դ.

## ԻՇԽԱՆՔ ԵՒ ԻՇԽԵՑԵԱԼՔ

Ո՛վ դու զոր երկինք պատուեցին, և որդւոց մարդկան հաճոյ թուեցաւ համբառնալ զքեզ 'ի վերայ իւրեանց իբրու կառավար ուղղիչ, խելամուտ լեր որպիսի՛ մեծ և պատուաւական աւանդ տուաւ քեզ, առաւելքան զխառն պաշտաման քոյ:

Ծիրանին զգենուս և 'ի գահոյս բազմիս. թագ վայելչութեան գեղազարդէն պսակէ զճակատ քո, գաւազան արքունի կայ 'ի ձեռին քում. այլ ոչ եթէ վասն քո միայնոյ տուաւ քեզ այդ ամենայն, և ոչ այնպէս առ անձին քո շահ, որպէս առ օգուտ ժողովրդեան քո:

Թագաւորի փառք՝ բարօրութիւն և յաջողութիւն ժողովրդեան իւրոյ. զօրութիւն և մեծութիւն նորա հանգուցեալ է 'ի սիրտս նոցա:

Բարձր և վսեմական են խորհուրդք թագաւորացին հանդոյն աթոռոյ նորա. 'ի բարձունս մտաբերէ և ըստ զօրութեան իւրում մեծի բուռն հարկանէ:

Կոչէ առ ինքն զիմաստունս տէրութ̃ե իւրոյ. խորհրդակից լինի նոցա ազատօրէն, և կարծեաց միոյ միոյ ՚ի նոցանէ ունկն մատուցանէ ։

Խնամով խնդրեալ ընտրէ ՚ի ժողովրդենէն, և ՚ի վերայ հասեալ բաւականութեան իւրաքանչիւր՝ պարապեցուցանէ զնոսա ՚ի գործ պատկան և ՚ի դէպ ։

Դատաւորք նորա արդարադատ, վերակացուք նորա խոհականք, և անձնեայք՝ սիրելեալքն ՚ի նմանէ ։

Պաշտպանէ զհնարս արուեստից և բարգաւաճէն . ընդ հովանեաւ խնամոց նորա ծաղկեալ աճեն գիւտք և մակացութիւնք ։

Ընդ ձեռնարկս և ընդ քաջութիւնս լինի կենակից, և վառէ նախանձ ՚ի սիրտս նոցա . ջանք և երկասէր վաստակք նոցա առաւելուն զփառս Թագաւորութեան իւրոյ ։

Զջանս վաճառականին որ ՚ի շահավաճառ զանձն յեղեալ է, զարթնումն մշակին որ արդասաւորութ̃ե երկրի ուշ եդեալ բազմացուցանէ զպտուղս, զճարտարութիւն հնարագէտ արուեստաւորաց և զեռանդն իմաստասէր համբակաց, շնորհօք և փառօք իւրովք պսակէ, և առատաձեռն պարգեօք վարձահատոյց լինի նոցա ։

Նաւարէ գաղթականս, նաւս կառուցանէ մեծամեծս, բանայ դէտոց ճանապարհըս նորս ՚ի գիւտութիւն նաւաչու ընթացից, և նաւահանգիստս անդորոյթս կազմէ ։ Ծառայք նորա ընուն մեծութբ, և զօրութիւն արքայութեան նորա անձէ օր ըստ օրէ ։

Կարգէ օրէնս իմաստունս և արդարս ժողովրդեան յարաշարժ վայելէ յարգիւնս գործոց իւրոց. և պահպանութեան օրինաց երջանիկ լինի ։

Ի գթութիւն հաստատեալ է զդատաստանս իւր . այլ ՚ի պատուհաս ամբարշտաց խստացուցանէ զդէմս իւր, և գտանի զդատաստան անաչառ ։

Դիւրալուր է առ բողոք ժողովրդեան . երագ է ՚ի փրկել զնոսա ՚ի ձեռաց նեղչաց իւրեանց, և ՚ի սանձել զձեռս հարըստահարողաց ։

Վասն այնորիկ իբրև զհայր իւրեանց սիրեն և մեծարեն զնա ժողովուրդք . հոգաբարձու համարին զնա ամենայնի՝ յորս վայելեն ։

Յօժարական միամտութիւն նոցա առբածանէ զսէր իւր յընդհանուրս, և ՚ի զգուշութիւն բարեկենդանութեան ժողովրդեանն խորհի զտիւ և զգիշեր ։

Ոչ որ բանայ զբերան իւր ընդդէմ նո-

բառ, և ոչ լսի ուստեք շշունջ քրթմնջանաց. և թշնամիք նորա ոչ համարձակին նեղել զաշխարհն նորա:

Միամիտք և նախանձաւորք են հպատակք նորա 'ի սպաս նորին. իբրև ըղ-պարիսպ պղնձի պաշտպան կան նմա, և գունդք բռնաւորաց հալածին յերեսաց նորա իբրև զյարդ 'ի կալոյ առաջի հողմոյ:

Խաղաղութիւն աներկեան՝ բնակեցուցանէ զժողովուրդ իւր յերանութեան. փառք և զօրութիւն նորա պատեն զաթոռով նորին մինչև յաւիտեան:

—⟫⟫⟫ ⟪⟪⟪—

# ՊՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔ

## Ա.

### ԲԱՐԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Յորժամ զմտաւ ածիցես զնախընթացս ձիրս բնութեան քո, կամ յորժամ 'ի թերութիւնս քո խոկասցես, մի մոռանար զերախտիս այնորիկ որ մեծարեաց զքեզ բանիւ մտաց, զարդարեաց բարբառով բերանոյ, և հաստատեաց զքեզ 'ի ժողովս մարդկան, որպէս զի կարող լինիցիս ընդունել և մատուցանել նպաստս և երախտիս։

Ի ձեռն այլոց մատակարարին քեզ կերակուր և հանդերձ, կահք կարեւորք, պաշտպանութիւն 'ի զրկանաց և 'ի հարըստահարութեանց, և ամենայն վայելք և զբօսանք և հեշտութիւն կենաց քոց. և զայս ամենայն յընկերութեան մարդկան վայելել հնար է քեզ։

Քո խակ շահ անձին պարտաւոր առնէ զերկիր բարեկամ և օգնական լինել մարդկան, որպէս զի և դու գտցես շնորհս առ ՚ի նոցանէ ։

Որպէս վարդ ՚ի ծոցոյ իւրմէ բուրէ զանուշահոտութիւն, այսպէս և սիրտ առն գթածի բղխէ զբարիս ։

Խիղճն վայելէ յանդորրու խաղաղական մտօք, և խրախ լինի ընդ բարեբաղդութի և ընդ յաջողուածս դրացեաց իւրոց ։

Դարձուցանէ զունկն իւր ՚ի լրոյ բամբասանաց, և կարեկից լինի ընդ աղէտս թերութեան մարդկան ։

Զբարերարութիւն սիրէ, և պատճառս խնդրէ. և ՚ի սփոփել զայլս՝ ինքնին մխիթարի ։

Վսեմական մտօք ցանկայ երջանկութեան ամենայն մարդոյ. և յառատութենէ սրտին՝ ամենեցուն ձեռնտու և օգնական լինի ։

## Բ.

## ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ի տիրել խաղաղասէր արդարութեան 'ի ժողովս մարդկան՝ հաստատի երջանկութիւն, և ամենայն որ անկասկած վայելէ 'ի բարիս իւր :

Ժուժկալութեամբ 'ի չափու կալ զյօժարութիւնս սրտի քո, և արդարութեամբ առաջնորդեա կամաց քոց :

Մի չարակնիր յինչս ընկերի քո, և մի յանօթ ուրուք ձեռնամուխ լինիցիս. այլ 'ի բաց արա զձեռն քո յամենայնէ որ ոչ քո իցէ :

Մի տար մի և միում իմիք բանսարկութեան, և մի տար թոյլ խռովարարաց խորհրդոց նեղել զանձն քո, և ամբանալ զձեռս քո 'ի վնաս անձին քո :

Ընկերին մի չարախօս լինիցիս, և մի սուտ վկայեսցես զումեքէ :

Մի կաշառաւորեր առներ զծառայ նորա, և մի ապստամբեցուցաներ 'ի նմանէ. քաւ լիցի քեզ խոտորեցուցանել զկին գրկաց նորա :

Զի մի դիցես վէրս անբժշկականս 'ի

սիրտ նորա , և մի անխրատելոցիս ՚ի նա անխրատութիւն՝ որում ոչ իցէ փոխարէն հատուցանել :

Լեր արդար անթերի յորժամ գործ ինչ իցէ քո ընդ ընկերին և դաշն ուխտի . և զոր կամիս զի արասցեն քեզ այլք՝ արա և դու նոցա նոյնպէս :

Հաւատարիմ լեր յաւանդն , և մի խար-դախեր զայն որ վստահ լինի ՚ի քեզ . զի-տես զի յաչս Տեառն առ հասարակ մեղք են և գողօնք և դաւաճանք :

Եւ տնանկն մի զրկող լինիցիս , և մի զճանկն զրկեսցես ՚ի վարձուց :

Ի տուրեւառս վաճառուց ունիցին մասն ձայնի գիտակցութեան քո . շատացիր փո-քուն , և մի ագահեր՝ զուղղութիւն գը-նոցին պատճառս առնել :

Հատո՛ զոր պարտիս . քանզի ՚ի պատիւ անձինդ յուսացեալ հաւատայ քեզ որ ետն . նուաստութիւն և անիրաւութիւն մեծ է չհատուցանել զպայմանն :

Ի վախճան բանիս , քննեա զինքն քո , ո՛վ որդի ընկերութեան , զյիշողականդ կալ քեզ ՚ի նպաստ . և եթէ պարտական յիմիք գտցես զանձն քո , յամօթ լեր և արտմեայ , և փութա զպայման փոխարի-նին հատուցանել :

Գ․․

## ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

Երանի՛ որ արկէ 'ի միտս իւր զսերմն գը-
թասիրութեան ․ զսէր և զողորմութիւն
բուսցէ նա ։

Գետք բարութեան բղխեսցեն յաղբե-
րէ սրտի նորա , և յորդեսցեն վտակք յօ-
գուտ մարդկան ։

Ձեռն տայ և մխիթար լինի տառապե-
լոց 'ի վիշտս նոցա , և խնդայ յօժանդա-
կել յաջողութեան ամենայն մարդկան ։

Ոչ դնէ մեղս դրացւոյն , արհամարհէ
զբան նախանձու և չարակամութեան ․ և
զքսութիւն ոչ առնու 'ի բերան ։

Ներէ անիրաւութեանց և յանցուա-
ծոց , և ջնջէ 'ի մտացն զապախտս մարդ-
կան ․ վրէժք և ոխութիւնք ոչ գտանեն տե-
ղի 'ի սրտի նորա ։

Չարի չար ոչ հատուցանէ փոխարէն ,
և զթշնամիս անգամ ոխերիմս ոչ ատեայ ․
այլ անիրաւութեանց նոցա յանդիմանու-
թիւն սիրոյ մատուցանէ ։

Մորմոքի ընդ ցաւս և ընդ աղէտս մարդ-

կան · զոր գործէ թեթևացուցանել ըզ-բեռն տառապանաց նոցա , և վարձս վաս-տակոյն համարի զխնդութիւն ընդ յա-ջողուածս նոցին :

Շիջուցանէ զբորբոք ամեհի ցասման · խաղաղարար լինի հակառակողաց , և զան-ձինս զայրացեալս ցածուցանէ · զդէմ ու-նի չարեաց նախանձու և ատելութեան · գովէ և գործակից լինի բարի բարի խոր-հրդոց դրացեաց իւրոց : Վասն այնորիկ անուն նորա գովութեամբ և օրհնութբ̄ յիշեսցի :

## Դ.

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Որպէս բարունակք ծառոյ զի իջուցա-նեն զհիւթ կենդանարար յարմատն որ 'ի վէր ամբարձեալ ունի զնոսա · և որպէս գետ զի վարեալ հասէ զալիս իւր 'ի ծով՝ յորմէ ակնեղբն աղբերք նորա · այսպէս և երախտագիտին սիրտ զուարճացեալ բեր-կրի 'ի հատուցման փոխարինի բարեացն զոր եգիտ :

Խնդամիտ սրտիւ շնորհապարտ զանձն

դաւանէ. սիրով և պատուով հայի 'ի բա-րեբարն իւր ։

Եւ եթէ ձեռն իւր ոչ հասցէ կշռել բա-րեացն փոխարէնս, բարեաւք կամօք զյի-շատակ նոցին առնէ 'ի սրտի, և ոչ մոռա-նայ յամենայն 'ի կեանս իւր ։

Աստուածեան մարդ նման է ամպոց երկնից, որք առեալ յերկրէ զծաղիկ, զբանջար և զգոլառուղ. իսկ առատաշնորհին սիրով՝ անապատ է առաջուստ. ըմպէ ան-յագ զանձրևն երկնաւոր, և ծածկեալ ընդ երկրաւ՝ պտուղ և ոչ մի բերէ ։

Ընդ բարեբարին քում մի նախանձիր, և մի կեղծաւորեր թագուցանել զշնորհս նորա որ առ քեզ. զի թէպէտ լաւագոյն է տալ քան ընդունել, և բարեբարութիւն զարմանս բերէ, այլ շնորհապարտ խո-նարհութիւն որսայ զսիրտ, և հաճոյ է յաչս Աստուծոյ և մարդկան ։

Մի ընդունիցիս շնորհս յամբարտաւա-նէն, և մի լիցիս շնորհապարտ անձնասիրի և ժլատի, զի մի ստասի պարծանօք յամօթ արասցեն զքեզ. քանզի անյագ է ագա-հութեան անէնչ ։

## Ե.

## ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ

Ո՛ որ զմայլեալդ ես գեղով ճշմարտութեան, և հաստատեալ զխորհուրդս քո յանդգաճոյճ հրապոյրս նորա. ըստ հաւատարմաբար առ նա, և մի թողուս զնա. Ժուժկալութիւն քո յառաքինութիւնս փառօք և պատուով պսակեսցէ զքեզ։

Բնական ճշմարտախօս զուարթութիւն անկէ 'ի սրտի. երկբերանութիւն և բանբերգաւոր ոչ եղանեն ընդ շրթունս նորա։

Շառաւղնի ընդ ստութիւնս և խոտորի ընդ դաւանս, այլ անքթիթ աչօք խօսի զճշմարտութենէ։

Զգոյշ կայ պատուոյ և մեծութեան անձին իւրոյ, այլ նուաստութիւն համարի խոնարհել 'ի կեղծաւորութիւն։

Բանք իւր յամենայն ժամ զուգաձայնք են խորհրդոյ մտացն. երբէք ոչ շփոթի և ոչ խռովի. քաջամիտ է 'ի ճըշմարտութեան իւրում, և զանգիտէ 'ի ստութենէ։

Ծանր է նմա զիջանել 'ի խարդախու-

թիւն . ըստ խորհրդոց սրտի իւրոյ խօսի բերան նորա ։

Խորհրդով և զգուշութեամբ բանայ զշրթունս իւր . մինչ գնէ Ճշմարտին, և խօսի կշիռ չափով ։

Խորհրդականաց լինի որպէս բարեկամ, կշտամբէ անվեհեր, և ոչ անկանի բան մի 'ի խոստմանց նորա ։

Դատարան զաղտնածածուկ սիրտ կեղծաւորի . կերպարանօք Ճշմարտութեան պատարուանէ զբանս ստոյս, և ամենայն կեանք նորա խարդախութեամբ են ։

Խնդայ 'ի վնաս, և արտամի 'ի զուարՃութեան, և խօսի վայրապար ։

Գործէ 'ի խաւարի համդոյն խղդման, և կարծէ զանձն զերծ 'ի վտանգաց . այլ անձնասատան լինի 'ի լոյս ստուգանքեան, և հալածեալ ծանակի ամաչապես զլուխ նր ։

Կեայ անձկութեամբ զամենայն աւուրս իւր . անմխիթարանք են լեզու նորա և սիրտ ։

Զանուն արդարոյ հնարի ժառանգել, և մաղձի առ նա խիթև զմեկերիմ, առ 'ի նենգել Ճարտարութեամբ ։

Անմիտ, քանզի և վատնակք քո առ 'ի ծածկել զոր եսդ՝ համարձակութեան քեզ աշխատութիւն սնոտի, և ոչ բնաւ որպէս կամիցիս երևեցուցանեն զքեզ . ծիծաղին

զխորամանկութեանն քով որդիքն խնա-
տութեան, յորժամ յանկարծ պաշտու-
մերկացի պատրաստեալ քո և մատնեցոյց զի-
նեցին ծածանեալ և գործեալ ։

# ՊՐԱԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Մի՛ է տէր Աստուած՝ սկիզբն և արարիչ ամենայնի, տեսուչ աշխարհի, ամենազօր, մշտնջենաւոր, անբաւելի ։

Արեգակն՝ որ շքեղապանծ պայծառութեամբ զինայն լուսաւոր առնէ զաշխարհս՝ ոչ է Աստուած. տապով իւրով կեանս պարգևէ բուսոց և տնկոց երկրի. հայեաց ՚ի նա իբրև ՚ի ստեղծուած ձեռին Աստուծոյ, այլ մի՛ երկիր պագանիցես նմա ։

Մխայնոյ Բարձրելոյն և ամենագիտին և ամենաբարերարոյն Աստուծոյ վայելէ երկրպագութիւն և պատիւ և փառք և գոհութիւն։

Որ տարածեալ ձգեաց ձեռամբ զհաստատութիւն երկնից, և մատամբ իւրով նկարեաց զՃանապարհս աստեղաց ։

Որ գնէ սահմանս Ովկիանու, և ոչ անցցէ ընդ այն. և ցծովս մրրկայոյզս ալէտանջս ասէ, անշարժ լերուք ։

Որ դողացուցանէ զերկիր , և սասանին յահէ նորա ազգք որդւոց մարդկան . ո արձակէ զփայլատակունս իւր և ահարկու առնէ զանդնդամս :

Որ 'ի չգոյէ ած 'ի գոյ զաշխարհս բանիւ բերանոյ իւրոյ . հարկանէ զնոսա բազկաւ իւրով , և բնաջինջ բնաբարձ լինին :

Երկինք պատմ. փառաց ամենակալին , և մի զօրութիւնք զգաստումն նորա , գուցէ կորնչիցին յերեսաց նորա :

Խնամք Տեառն ձգին 'ի վերայ ամենայն ստեղծուածոց իւրոց . ուղղէ և առաջնորդէ ամենայնի անճառ խնամատութեամբ իւրով :

Նա քննէ օրէնս կարգեալ անեղութեան աշխարհի , և սքանչելապէս անփոփոխելի իւրաքանչիւր զկարգ իւր , և ամենայն բնութիւնք անսասան կանգնին նորա :

Ամենայն գիտութեան հասու է նորութեանց մտաց իւրոց . և գաղտնիք հանդերձելոց մերկապարանոց կան առաջի նորա :

Ոչ թաքչին յաչաց նորա ծածուկք սրտի քո , և ճանաչէ զկամս քո մինչև քո խորհեցեալ ինչ իցէ :

Ոչ ինչ ոչ վրիպի 'ի նախագիտութենէ նորա , և չէ ինչ որ ըստ պատահի գործի առաջի նորա :

Զարմանալի է յամենայն գործս իւր, և անքննելի է խորհրդովք, և 'ի վեր է քան զմիտս զօրութիւն իմաստութեան նորա :

Վասն այնորիկ առ ի փառս և պատիւ գերահրաշ հանճարոյ նորա, և խոնարհեցո զանձն քո անքննելի հնազանդութեամբ ընդ առաջնորդութեամբ ձեռին նորա :

Առատապարգև և մարդասէր է Տէր, և հաստատեաց զաշխարհ սիրով և ողորմութեամբ :

Յայտնի են յամենայն 'ի գործս նորա կամք նորա բարերարք . աղբիւր է անհատութեան և լրումն կատարելութեան :

Գործք ձեռաց նորին պատմեն զշնորհս նորա, զմեծն և փառաւորեն զնա 'ի վայելս իւրեանց . նա ինքն զարդարէ գեղով զստեղծուածս իւր, կարգաւորէ անդադրեամբ, յեղյեղութեամբ ժամանակաց և զօրացուցանէ զնոսա, և պաշտպանէ նոցին յազգէ մինչև յազգ :

Եթէ զաշս 'ի վեր ընդ երկինս համբառնայցեմք, պայծառութեամբ փառաց նորա ընծայի նկատողք . և եթէ 'ի խոնարհ յերկիր ակնարկիցեմք, աստ բարեաց նորա լցեալ են ծագք երկրի . բլուրք և հովիտք ցնծութեամբ երգեն նմա . դաշտք և անտառք և անդաստանք զփառս նորա քարոզեն :

Բայց դուք , ո՛վ մարդ , նախապատուի. նախամեծար արար Տէր , և դնէր 'ի վերայ ամենայն արարածոց իւրոց կացոյց զպայման վիճակի քո :

Բանիւ զարդարելոյ դուք առ անկողուստ սրահելոյ զերջանկական աշերջութիւնդ քո · խոստում յարդարելոյ դուք , որպէս զի ընկերութեամբ բարդաւաճ լինիս · խմացական զօրութեամբդ վերացոյց զմիտս քո՝ զի անձնաւէլի շնորհաց իւրոց քննող և տեսող կացցես :

Եւ զօրէնս զոր սահմանեաց քեզ 'ի կատարել կենաց՝ բարեխնամ կամքն դիւրատարս արար ընտանութական յօժարութեց անձին քո , որպէս զի և 'ի հնազանդել անդ քո՝ երջանկութեան անձինդ գտանցես պատճառս :

Եւ արդ մի լուեր 'ի փառս տայոյ շնորհաց և ողորմութեան նորա , և մի դադարեր յերգոց գոհութեան · խորհեսցես ըղձութեամբ 'ի պատնչելիս սիրոյ և գթութեանց նորա · բղխեսցէ սիրտ քո բանս շնորհապարտ գոհութեանց · պատմեսցեն շրթունք քո զփառս և զպատուի նորա · և ամենայն գործք կենաց քոց յայտնի արտացեն զփափագ սիրոյ քո 'ի պահել զպատուիրանս նորա :

Բարի և արդար է Տէր , և դատելոց է

զաշխարհ ուղղութեամբ և արդարութեամբ :

Քանզի որ հաստատեաց օրէնս 'ի բարութեան և 'ի գթութեան, վայելէ նմա և համարս պահանջել 'ի տնտեսողացն։

Մի կարծիցես յաւանականալ յանդըրնութեամբ. եթէ պակասեալ իցէ զօրութ բազկի Տեառն՝ յերկայնամտել նորին 'ի խնդրել զամբարշտութեանց քոց զվրէժ. և մի խաբեր զանձն քո 'ի յոյս անտափ, որպէս թէ զանց արասցէ զքեւ Տէր :

Քանզի աչք նորաքննեն զսիրտ և զերիկամունս մարդկան, և ոչ է մոռացութիւն առ նմա. և ոչ առնու ակն Տէր մեծութեան հասակի և պատուոյ, և փառաց և աւագութեան :

Այլ առ հասարակ անձն քաղցրահամն և անուշահամ, մեծատուն և անանկի, իմաստնոյն և ագխարի, 'ի թօթափել հոգւոյ ըղձանդակքեր շղթայս մահկանացու կենցաղոյս բաց ակնարկել կամաց Տեառն՝ ժառանգեսցէ վարձս արդարս և մշանջենաւորս, զփոխարէնս գործոց իւրոց :

Եւ խռովելոյն յայնժամ ժողովք ամպարշտաց յահէ անտի նորա : Այլ ողի արդարոյն խնդութեամբ մտանէ և ելանէ 'ի դատաստանէ :

Վասն այնորիկ յերկիւղ Տեառն խոնարհիր զամենայն աւուրս կենաց քոց, և 'ի

Ճանապարհաց նորա մի՛ հեռի առնիր · անուն աղգամանց զգօնութեան, և ժուժկալութեանք 'ի չափու կալ զանձն քո · արդարութիւն առաջնորդեսցէ ձեռաց քոց, և գութք ջեռուսցեն զսիրտ քո ։ Եւ գլուխ ամենայնի, խոնարհ անձնատութեամբ վառեա զհոգի քո առաջի Տեառն 'ի գործս բարեպաշտութեան ։

Ամփոփեա զգուշացեալ զնայեցս 'ի չափոյս երջանկութեան 'ի կեանս քո, և յետ աստեացս ժամանեսցես յանփոփոխելի կայս անանց և անախտական երանութեանցն յարքայութիւն Տեառն ։

Յայնժամ եղիցի վախճան Ճշմարիտ անսասանութեան մարդկային կենաց ։

# ՑԱՆԿ

—

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ . . . . . 5

ԹՈՒՂԹ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԳՐՈՅՍ . 9

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅ ԱՆԳՂԻԱՑԻՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ . . . . . 15

ՆԱԽԵՐԳԱՆ . . . . . . . . 1

ԳՐԱԿ Ա. ՊԱՐՏՔ ՄԱՐԴՈՅ Ա-ՌԱՆՁԻՆ . . . . . . . 5

Ա. *Խելամտութիւն* . . . . . . —
Բ. *Չափաւորութիւն* . . . . . 6
Գ. *Գործասիրութիւն* . . . . 8
Դ. *Նախանձաւորութիւն* . . . . 10
Ե. *Խոհականութիւն* . . . . . 13
Զ. *Արիութիւն* . . . . . . 16
Է. *Բաւականութիւն* . . . . . 18
Ը. *Ժուժկալութիւն* . . . . . 20

ԳՐԱԿ Բ. ԿԻՐՔ . . . . . . 25

Ա. *Յոյս և երկիւղ* . . . . . . —
Բ. *Ուրախութիւն և տրտմութիւն* . 27
Գ. *Բարկութիւն* . . . . . . 30
Դ. *Գթութիւն* . . . . . . . 32
Ե. *Սէր և ցանկութիւն* . . . . 34

ԳԻՐՔ Գ. ԿԻՆ . . . . . . . 36

ԳԻՐՔ Դ. ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳԱԿԱՆՔ 40

Ա. *Կանանիք* . . . . . . . . —
Բ. *Հայր* . . . . . . . . . 42
Գ. *Որդի* . . . . . . . . . 44
Դ. *Եղբայր* . . . . . . . . 46

ԳԻՐՔ Ե. ՊԱՅՄԱՆՔ ԿԵՆԱՑ . 47

Ա. *Խնամումն և աղէտ* . . . . —
Բ. *Մեծատուն և տնանկ* . . . . 49
Գ. *Տէր և ծառայ* . . . . . . 52
Դ. *Իշխանք և իշխեցեալք* . . . 54

ԳԻՐՔ Զ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՊԱՐՏՔ . . . . . . . . 58

Ա. *Բարերարութիւն* . . . . . —
Բ. *Արդարութիւն* . . . . . . 60
Գ. *Ողորմածութիւն* . . . . . 62
Դ. *Երախտագիտութիւն* . . . . 63
Ե. *Անկեղծութիւն* . . . . . 65

ԳԻՐՔ Է. ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒ-
ԹԻՒՆ . . . . . . . . . 68